

ԱԴՐԲԵՋԱՆԻ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ

ИНСТИТУТ  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ

ԱՇԽԱՏԱՆՔԸ

III.

352

Խ-84

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱԴՐԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ  
ԲԱԳՈՒ 1930



Ca 1624  
352

mu-84

Ա Դ Ր Բ Ե Զ Ա Ն Ի  
Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ա Դ Ի Ր Կ Ո Մ Ի Տ Ե

Պրոֆեսորներ բոլոր յերկրների, միացե՛ք!

01 MAR 2010

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

# ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԵԶԽԱՏԱՆՔԸ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՅԱՆՔԱՅԻՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ  
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԻՆՔՆԱ-  
ՍՏՈՒԳՄԱՆ յեղ չԱՇԱԿՏՈՒ ԿԱՄՊԱՆԻԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԱԳՐԱԿԱՆՏԱԳՈՐԾԱԿՈՄԻ ԿԱԶՄԱԿԱՆԻ  
ԲԱԳՈՒ 1930



1930.05.2013

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ  
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ  
ԿՈՄԻՏԵ  
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ  
ԿՈՄԻՏԵ

Напечатано  
в гостипогра. „Красный Восток“  
Бакполиграф, БСНХ  
Баку, Карантинная, 84.  
Главлит № 140.  
Заказ № 3195.—Тираж 2500 экз.  
Ст. форма А. 5.



61026-67

# I.

Ա. Ս. Խ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ  
ԿՈՄԻՏԵԻ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ  
1929 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի

## Վ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

### 1930 ԹՎԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵ- ՍԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

1. Առաջին գարնանային գյուղատնտեսական կամ-  
պանիան բացառիկ քաղաքական և տնտեսական նշանա-  
կություն ունի՝ լուծելու համար այն հիմնական տնտեսա-  
կան խնդիրները, վոր 5-ամյակի 2-րդ տարում դրված են  
մեր յերկրի առաջ:

Խորհրդային Ադրբեջանի գյուղական տնտեսություն-  
ը՝ չնայած վերջին տարիների բավականաչափ բարձրաց-  
մանը, այնուամենայնիվ վորոշ չափով հետ ե մնացել թե  
հացահատիկների և թե մանավանդ, տեխնիկական բույ-  
սերի (բամբակ), նաև անասնապահության ասպարի-  
զում:

Գյուղի սոցիալիստական հատվածի աճումը և հե-  
տագայում նրա ել ավելի ուժեղացնելը պահանջում ե, վոր  
Ադրբեջանի գյուղական տնտեսության բոլոր ճյուղերն  
ել զարգանան բացառիկ բարձր և լարված թափով: Դրա  
համար առաջիկա կամպանիան ավելի խիստ բեկման  
հիմք պետք ե դնի՝ մի կողմից Ադրբեջանի ամբողջ գյու-  
ղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման,  
խիկ մյուս կողմից նրա ընդհանուր արտադրականության  
գործում:

2. 1930 թվի գարնանացանի գյուղատնտեսական  
կամպանիան տարվելու ե ուժեղացրած ղառակարգային  
պայքարի պայմաններում: Կուլակների կողմից այդ կը-



ախմբ ուղղված ե մեր յերկրում հաջողությամբ տարվող սոցիալիստական շինարարությունը խանգարելու կողմը, մասնավորապես գյուղատնտեսական կամպանիայի դեմ. և դա կարտահայտվի կուլակների կողմից տնտեսական սփռոտած կազմակերպելով (ցանքսերը լրիվ չանելով) և գյուղացիության միջակ մասսաների մեջ ուժեղ ագիտացիա անելով, վոր նրանք ցանքսերը չընդարձակեն, մանավանդ բամբակինը:

Այդ բանն աչքի առաջ ունենալով տեղերի խորհրդային ապարատը լրջորեն պիտի պատրաստվի առաջիկա կամպանիայի համար. նա պիտի բաժանակներ, չքավոր—միջակ գյուղացիության լայն մասսաների ակտիվությունը և ինքնագործունեությունը գործի քաշելով հակահարված կազմակերպել՝ բոլոր հակախորհրդային և փաստավորության փորձերի ու կուլակների դեմ:

3. Անցյալ տարվա և աշնանային ցանքսային կամպանիայի փորձը ցույց է տվել, վոր գյուղական խորհուրդները և դայրագործկոմիտեները շատ անբավարար են պատրաստվել ցանքսային կամպանիային: Ցանքսային կամպանիաները չեն յեղել գյուղի աշխատավորների ուշադրություն կենտրոնում: Չքավորա—միջակային ակտիվը կազմակերպված չի յեղել՝ ագրոմինիստներ և ցանքսի հետ կապված մյուս միջոցները գործադրելու համար: Շրջանային գործկոմիտեները, դայրագործկոմիտեները, գյուղխորհուրդները, կոոպերատիվները, վարկային ընկերությունները, կոլխոզները, արտադրական—կոոպերատիվ միությունները, սովխոզները, գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները մոտիկ ամիսների ընթացքում պիտի գարնանային գյուղատնտեսական կամպանիան իրենց աշխատանքի կենտրոնում դնեն: Այդ կամպանիայի պատասխանատու լինելը և կարևորությունը պարտավորեցնում են շրջանային գործկոմիտեներին, դայրագործկոմիտեներին, շրջանային և դայրա—կազմակերպություններին՝ բոլոր գյուղական կազմակերպություններին, և առաջին հերթին

գյուղխորհուրդների աշխատանքն առանց դանդաղելու վերակազմել և վճռականորեն աշխուժացնել:

4. Շրջանային ու դայրագործկոմիտեների և գյուղական խորհուրդների անելիքն առաջիկա գյուղատնտեսական կամպանիայում հետևյալն է լինելու.— համարձակորեն և մեծ չափերով լայնացնել բոլոր տեսակի բույսերի, մանավանդ բամբակի ցանքսերը, մեծացնել հացահատիկների և բամբակի բերքատվությունը, մանավանդ համայնեցրած հատվածում՝ դրա համար ավելի լայնորեն պիտի գործադրել պարտադիր ագրիկուլտուր միջոցները և հանքային պարարտացումը. ամրապնդել գյուղական տնտեսությունից սոցիալիստական հատվածը և նոր կոլխոզներ կազմակերպել, մասնավորապես բամբակային և անասնապահական. չքավորներին լայն արտադրական ոգնություն հասցնել և աջակցել միջակային տնտեսություններին՝ արտադրական կոոպերացման և կոլլեկտիվացման գործում. գյուղացիության մեջ լայն բացատրական ագիտացիա անել՝ գյուղի բաղադրական և տնտեսական նշանակությունն և գյուղի բաղադրական և տնտեսական նշանակությունն սափախել, վճռական պայքար կազմակերպել կուլակային սփռոտածի և այն ամենի դեմ, ինչ կուլակն անում է վարկաբեկելու կառավարության ձեռք առաջ միջոցները— գյուղական տնտեսությունը լավացնելու համար: Գյուղի խորհրդային և տնտեսական կազմակերպություններին աշխատանքում այդ խնդիրները պիտի կազմեն հիմնական բովանդակությունը:

5. Խորհուրդները տեղերում և գյուղում գործող ամեն մի կազմակերպություն՝ իրար մեջ և խորհրդի հետ համաձայնեցնելով գարնանային գյուղատնտեսական կամպանիայի պլանը, պետք է առանց ուշացնելու մշակեն լայն ժողովներում և խորհրդակցություններում, պետք է ճշգրիտ և կոնկրետ կերպով վորոշեն, թե այդ պլանը կատարելու գործում նրանք ինչ մասնակցություն պիտի ունենան և ինչ դեր պիտի խաղան:

Գարնանային գյուղատնտեսական կամպանիայի շրջ-



Ջանային պլանն անհրաժեշտ է քննել շրջագործկոմիտեի աշխատանքի պլաններում, դայրագործկոմիտեում ուսուցանական ակտիվի մասնակցութեամբ. և այդ պլանի հիման վրա ամեն մի դայրայի համար պիտի մանրամասն պլան մշակել: Դայրայի պլանն անհրաժեշտ է քննել՝ չքավորների ժողովներում, գյուղատնտեսական արտադրական խորհրդակցութեաններում, գյուղական խորհուրդների լայնացրած նիստերում՝ գյուղական ակտիվի հետ միասին, գյուղական ժողովներում. և հետո այդ պլանի հիման վրա մշակել գյուղական պլանները՝ դրանց մասին տեղեկացնելով առանձին գյուղական ծխերին—ցանոդներին: Շրջանային, ուսուցական և գյուղական պլանները մշակելիս ժողովներում և խորհրդակցութեաններում անհրաժեշտ է ապահովել գյուղի աշխատավորության ինքնանախապատեթյան լայն ծավալումը, այնպես, վոր անցյալի սխալները հաշվի առնելով, թույլ չտալ կրկնելու այս տարի:

6. Առաջին գարնանացանի կամպանիայի պլանները հաջողութեամբ իրագործելու համար անհրաժեշտ է բոլոր գյուղխորհուրդներում ընտրել ագրոլիագործներ: Ագրոլիագործների թեկնածութեանները պիտի նախապես քննվեն չքավորների ժողովներում: Ագրոլիագործներ պիտի ընտրվեն այնպիսիները, վորոնք ամենից առաջավոր դասակարգայնորեն-կայուն և խորհրդային իշխանութեան ձեռք առած միջոցներն իրագործելու հաստատակամ ակտիվիստներ են:

7. Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցութեանները պիտի մեծ դեր կատարեն այս կամպանիայում: Գյուղխորհուրդները պիտի ոգտագործեն գյուղատնտեսական արտադրական խորհրդակցութեանները, պիտի նրանց տան գործնական աշխատանք, այդ խորհրդակցութեանների միջոցով պիտի մշակեն գործնական գյուղատնտեսական կամպանիայի պլանը՝ տեղեկացնելով այդ պլանի մասին գյուղի ծուխը—ցանոդին: Խորհրդակցու-

թեանների միջոցով գյուղխորհուրդները պիտի աշխատեն իրագործել ագրոմիսիմումը, խիստ հերթ սահմանել ջրելու համար,—ջուրը առաջին հերթին չքավորին տալով, —վերահսկողութեան ունենալ, թե ցանոդներն ինչպես են կատարում գարնանացանի կամպանիայի արտադրական պլանը:

8. Խորհուրդների հաշվետու կամպանիան և նրանց գործունեյութեան ինքնաստուգումը լինելու է 30 թվի մարտին. այդ բանը պիտի ապահովի, վոր գարնանային գյուղատնտեսական կամպանիան հաջող պատրաստվի և իրագործվի: Խորհուրդների գործունեյութեան ինքնաստուգման կոմիսսիաները պիտի իրանց ուշադրութեանը կենտրոնացնեն այն բանի վրա, թե գյուղխորհուրդներն ինչպես են տարել գարնանային գյուղատնտեսական կամպանիայի նախապատրաստական աշխատանքները. միաժամանակ նրանք պետք է աշակցեն գյուղական խորհուրդներին՝ այդ կարևորագույն կամպանիան լավագույն կերպով իրագործելու:

9. Գարնանացանի կամպանիան հաջող տանելու համար վճռական նշանակութեան ունի գյուղի լայն մասսաների կազմակերպումը: Վորպեսզի չքավորա-միջակային մասսաներն ել ավելի կազմակերպվեն ու մասնակցեն գարնանացանի կամպանիային և վորպեսզի գյուղական ակտիվը լի ու լի կերպով գործնական աշխատանքի լծվի, բոլոր գյուղական խորհուրդներում պիտի կազմակերպվեն չքավորա-միջակային բերգագներ՝ գարնանացանի կամպանիայի համար: Չքավորա-միջակային ամեն մի բերգագան պիտի կազմված լինի 4—5 հոգուց՝ ամենից ավելի ակտիվ բատրակներից և միջակներից. ամեն մի 25 տնտեսութեան համար մի բերգագ պիտի լինի: Բերգագայի անելիքներն են.—գործնականորեն ոգնել գյուղխորհուրդներին, գյուղատնտեսներին, ագրոլիագործներին՝ գարնանային գյուղատնտեսական կամպանիան կյանքում գործադրելիս. ստուգել թե առանձին տնտեսութեաններն ինչ-



պես են կատարում ագրոմինիմումը և ոգնել, վոր այդ ագրոմինիմումը կյանքում գործադրվի. բաց անել կուլակներէ խաբեբայությունները և կոնկրետ կերպով կուլել դրանց դեմ:

10. Անցած ցանքսային կամպանիաների փորձը ցույց ե տվել, վոր հաճախ գյուղի անմիջական ղեկավարները (գյուղխորհրդի նախագահը, գյուղատնտեսական սեկցիայի բյուրոն և այլն) պարզ չեն պատկերացնում իրենց գյուղատնտեսական կամպանիաները թե ամբողջովին և թե նրանց առանձին ետապները: Անցած յերկու ցանքսային կամպանիաների թույլ արդյունքները մեծ մասամբ հետե վանք են այն բանի, վոր այդ գործիչները և ակտիվիստները չեն հասկացել գյուղատնտեսական կամպանիայի տնտեսական և քաղաքական հսկա նշանակութիւնը ու չեն կարողացել կազմակերպել մասսաներին:

Հողփողկոմը, Կոլխոզցենտը, Աղրկենտրոնները կազմաթիւնը, Աղրպրոֆխորհուրդը, բոլոր Շրջանային Գործկոմները, Ի. Լ. Ղարաբաղի Շրջանային Գործկոմը և Նախկրայի Կենտրոնները պետք ե կազմակերպեն 5-որդա դայրասեմինարներ՝ զարնանային գյուղատնտեսական կամպանիայի վերաբերմամբ: Այդ սեմինարները պիտի լինեն ա) ագրոլիագորներէ, բ) գյուղխորհուրդներէ նախագահներէ և քարտուղարներէ, գ) գյուղատնտեսական սեկցիաների բյուրոներէ անդամներէ, դ) կոլխոզնիկներէ համար: Նաե պիտի կազմակերպեն մի շարք դասախոսութիւններ գյուղատնտեսական արտադրական խորհրդակցութիւններէ անդամներէ համար:

Սեմինարները պիտի կազմակերպել դայրայի 2—3 կետերում, միացնելով 3, 4, 6 գյուղխորհուրդներ,— վորպեսզի բոլոր ագրոլիագորները, գյուղխորհուրդներէ նախագահները և քարտուղարները, գյուղատնտեսական սեկցիաների բյուրոներէ անդամները, կոլխոզնիկները և այլն կարողանան ոգտվել սեմինարներից:

11. Սուսջիկա զարնանային գյուղատնտեսական կամպանիայում տեղերի խորհուրդները պիտի լախորեն ծա-

վալեն սոցիալիստական մրցութիւնը՝ գյուղերի և ուսյոնների միջև, թե ով ավելի լավ կկատարի ցանքսային պլանները, ով ավելի լավ կկազմակերպի ագրոմինիմումը, ցանքսերի կոնտրակտացիան և այլն իրականացնելու գործը: Առանձին ուշադրութիւն պիտի դարձնել կոլխոզներէ միջև սոցիալիստական մրցութիւն կազմակերպելուն՝ թե առանձին գյուղերում ու ուսյոններում և թե շրջաններում:

12. Բոլոր շրջանային գործկոմները, Ի. Լ. Ղարաբաղի շրջգործկոմը, Նախկրայի Կենտրոնները և Բագխորհուրդը, Նույնպես և բոլոր դայրագործկոմները պետք ե ներկա վորոշումը մշակեն համապատասխան գործկոմներէ պլենումներում և կոնկրետ միջոցներ նշեն՝ 1930 թվի զարնանային գյուղատնտեսական կամպանիայի կազմակերպման վերաբերմամբ:

13. Հողփողկոմը, Կոլխոզցենտը և Քեյքերիւզին Աղրկենտրոնները կազմաթիւն հետ միասին պետք ե շտապով հրատարակեն մի շարք հանրամատչելի գրքեր, ուր բացատրված լինի 1930 թվի զարնանային գյուղատնտեսական կամպանիայի քաղաքական և տնտեսական նշանակութիւնը:

Աղրկենտրոններէ նախագահի տեղապահ՝  
Մ. ԵՅԵՆԴԻՅԵՎ,

Ա. Խ. Ս. Հ. Ժողկոմխորհի նախագահ՝  
ԲՈՒՆՅԱԹ-ԶԱՂԵ

Աղրկենտրոններէ քարտուղար՝  
Ա. ՇԱՀԲԱԶՈՎ,



**ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ****ԳԵՐՆԱՆՑՈՒՆԻ ԿԵՐՊՈՒՆԵՐԻ  
ԸՌԹԻՎ**

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ  
ՆԵՐԻՆ, ԴԱՅՐԱԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ՊՐԵԶԻ-  
ԴԻՈՒՄՆԵՐԻՆ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ-  
ՆԵՐԻ ՊԼԵՆՈՒՄՆԵՐԻՆ, ԱԳՐՈԳՈՐԾԻՋՆԵ-  
ՐԻՆ, ԺՈՂՎՈՄԱՏՆԵՐԻՆ ՅԵՎ ԳՅՈՒՂՈՒՄ  
ԱՇԽԱՏՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐ  
ՊՈԹՅՈՒՆՆԵՐԻՆ

# **ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ՈՒ ԱԳՐՈՒՄԱԶՈՐՆԵՐ ԸՆՏՐԵԼ**

Հնգամյակը պահանջում է բարձրացնել գյուղական տնտեսությունն, առանձնապես բամբակի կուլտուրան, ընդարձակելով ցանքսային տարածություններն ու բարձրացնելով բերքատվությունը: Դրա համար անհրաժեշտ է վոր ամենքը, մանավանդ խորհրդային կազմակերպություններն, իրանց ուշադրության կենտրոն դարձնեն այդ հարցերն ու միջոցները, վորոնք իսկապես պետք է գյուղ խորհուրդներին ու ռայոնական գործկոմներին գյուղական տնտեսության կազմակերպողներ դարձնեն:

Համապատասխան այդ ընդհանուր խնդիրների կենտրոնական Գործադիր Կոմիտեի Պրեզիդիումին և Ժողովրդական Կոմիսսարների Խորհուրդը մի շարք վորոշումներ են հրատարակել՝

- ա) գաղնանացանի կամպանիան սանելու մասին.
- բ) գյուղխորհուրդներին կից ագրոխազորների մասին.

յեվ գ) գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններին մասին:

Այսպիսով գյուղի աշխատավոր մասսաների ուշադրությունն ու նրա չքավոր-միջակ խավերի ախտավու-

թյունն առաջին հերթին կենտրոնացվում է հետևյալ կոնկրետ հարցերի ըննության վրա.—

գյուղխորհուրդների նշանակությունը՝ գյուղական տնտեսությունը յեվ բերքատվությունը բարձրացնելու գործում.

գյուղխորհուրդներին կից գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններ սեղծել.

գյուղխորհուրդներին կից ագրոխազորների ինստիտուտ սեղծել.

թե անհասական յեվ թե կոլեկտիվ տնտեսություններում գյուղատնտեսական ամենապակաս պահանջները (ագրոմիխիում) կատարելու անհրաժեշտությունը.

ամենամեծ աջակցությունը ցույց տալ կոոպերացիայի ամբողջ աշխատանքին՝ մանավանդ արտադրական կոոպերացիան ու կոլեկտիվացման գործում:

Գյուղխորհուրդները գյուղի հիմնական կազմակերպող ույժն են հանդիսանում: Նրանք գյուղական տնտեսությունը բարձրացնելու գործում պետք է լայն հասարակայնություն զարգացնեն և չքավոր-միջակ մասսաների նախաձեռնությունն ոգտագործեն գյուղական տնտեսության արտադրականությունն ու ապրանքայնությունը բարձրացնելու վոչ միայն սոցիալիստական հատվածում (կոլխոզ, սովխոզ), այլև չքավորների և միջակների անհատական տնտեսություններում:

Այժմ խորհրդային, կուսակցական ու պրոֆմիութենական որդանների աշխատանքը գնահատելիս՝ չենք նայում, թե նրանք ինչպես են գյուղատնտեսական տուրքը հավաքում, կամ այս ու այն վարչական միջոցները գործադրում: Այլ նայում ենք, թե յուրաքանչյուր գյուղխորհուրդ բերքատվությունը բարձրացնելու իր գործնական աշխատանքներում ինչքան է կարողանում գյուղացիության չքավոր-միջակ խավերի լայն մասսաները կազմակերպել, գործնական աշխատանքի քաշել գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններին, ագրոխա-



գործներին, առանձին «կուլտուրնիկ» գյուղացիներին, նրանց նախաձեռնութիւնն ոգտագործել գյուղական տընտեսութիւնը բարձրացնելու գործում:

Այժմ առանձնապէս լայնորեն պետք է բացատրական աշխատանքներ կատարվեն արտադրական խորհրդակցութիւնների և գյուղխորհուրդներին կից ագրոլիա-գործների մասին:

Պետք է այնպէս անել, վոր յուրաքանչյուր ընտրող չքավոր, բատրակ ու միջակ հասկանա հետեյալը.—

Յուրաքանչյուր արտադրական խորհրդակցութիւն պետք է քննի տրված գյուղի ցանքսային կամ պանիայի պլանը, ստուգի, թե այդ պլանը ինչ չափով է ապահովված անհրաժեշտ նյութական միջոցներով, անհրաժեշտ ախտահանիչ նյութերով. ինչքան մեքենա կա, և զրանք վորքան պատրաստ են հացահատիկ գտելու. ինչպէս է սերմի հասարակական ֆոնդի դրութիւնը. ինչ չափով են ղեկավարում տեղական գյուղատնտեսները և այլն:

Ապա ամեն մի ընտրող չքավոր, բատրակ ու միջակ պետք է հասկանա, վոր դեպի գյուղատնտեսական արտադրական խորհրդակցութիւն աշխատանքները պետք է քաշել գյուղի բոլոր ակտիվ ու կուլտուրական ուժերը, ի նկատի ունենալով բերքատվութիւնը բարձրացնելու խնդրի չափազանց կարեոր լինելը: Պետք է հասկանա, վոր դեպի այդ աշխատանքները պիտի քաշել գյուղական չքավոր-միջակ ակտիվը, ավելի կուլտուրական յերկրագործ չքավորներին, միջակներին, գյուղատնտեսներին, ուսուցիչներին, կոլխոզների, սովխոզների, կոոպերատիվ և մյուս կազմակերպութիւնների ներկայացուցիչներին:

Միևնույն ժամանակ պետք է ամեն կերպ հետևել, վոր արտադրական խորհրդակցութիւնները ձևականորեն խորհրդային պարտիք կատարել չդառնան, այլ գյուղական տնտեսութիւնը բարձրացնելու կենդանի, նախաձեռնող որդաններ:

Առանձին գյուղական տնտեսութիւններում բերքա-

տվութիւն և արտադրութիւն բարձրացնելում մեծ դեր պետք է խաղան ագրոլիագործները, վորոնք հենց այժմ պետք է ընտրվեն:

Տեղական կազմակերպութիւնները պետք է անմիջապէս անցնեն ագրոլիագործների ընտրելուն ու գյուղատնտեսական արտադրական խորհրդակցութիւններ կազմակերպելուն:

Այդ աշխատանքի ժամանակ նրանք պետք է առանձին ուշադրութիւն դարձնեն ագրոլիագործների ու գյուղատնտեսական արտադրական խորհրդակցութիւնների անդամների ընտրութիւն վրա. այդ աշխատանքին պետք է քաշել ամենակտիվ չքավորներին ու միջակներին, առաջին հերթին նրանց, վոր իրանց տնտեսութիւնը տա-նում են համաձայն գյուղատնտեսութիւն պահանջների:

Նախ քան ագրոլիագործներ ու գյուղատնտեսական արտադրական խորհրդակցութիւն անդամներ ընտրելը պետք է մանրամասն բացատրական աշխատանք կատարել չքավորների ու ակտիվի ժողովներում, թե ինչ է ագրոլիագործների ու գյուղատնտեսական արտադրական խորհրդակցութիւնների անելիքներն ու պարտականութիւնները, նրանց աշխատանքի հասարակական նշանակու-թիւնը:

Առաջիկա զարնանացանի կամ պանիայում ահագին նշանակութիւն կունենա, յեթե բացատրվի, թե գյուղական տնտեսութիւնը ու բերքատվութիւնը բարձրացնելու համար ինչ դեր ունի ագրոմինիմումը կատարելը, այն է՝ սերմեղենն ախտահանելն ու մաքրելը, վնասատուների դեմ կռիւն, ալաղի դեմ կռիւն, ժամանակին շաքարացանելը, սառնամարն ու ջրի առուները մաքրելը:

Հենց այժմ արդեն խորհուրդներն ու հասարակական կազմակերպութիւնները պետք է լուրջ ուշադրութիւն դարձնեն գյուղացիութիւն մեջ արտադրական ակտիվ տրամադրութիւն ստեղծելու, վոր նա շարունակի կատարել ցանքսային տաքածութիւնն ընդարձակելու և բերքատվութիւնը բարձրացնելու պլանը:



Առաջարկվում է գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների գործնական կազմակերպումը և ագրոլիազորների ընտրությունները կատարել այսպես. —

Գյուղխորհուրդները հասարակական կազմակերպությունների հետ միասին իրանց ռազոնի բոլոր գյուղերում աշխատավոր կանանց ու տղամարդկանց ընդհանուր ժողովներ են գումարում, փոխել բացատրում են ագրոլիազորների, գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների իրավունքներն ու պարտականությունները: Դրանից հետո արդեն տրված տեղի համար ագրոլիազորի ընտրությունն է կատարվում և ընկերներ են առաջադրվում գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններ համար:

Գյուղական տնտեսությունում սոցիալիստական տարրերն ուժեղացնելու և գյուղի չքավոր-միջակ մասնատների տնտեսությունը բարձրացնելու համար հարկավոր միջոցներ կյանքի մեջ մտցնելիս՝ անկասկած գյուղում իր տնտեսական ու քաղաքական ազդեցությունը պահպանելու համար կոպող կուլակների կողմից վճռական դիմադրության պետք է հանդիպենք: Ուստի չքավոր-միջակ մասնատները գյուղական տնտեսությունը բարձրացնելու հարցի շուրջը կազմակերպելու հետ միասին՝ տեղական կազմակերպությունների կարևորագույն անելիքն է հանդիսանում՝ գյուղում դասակարգային թշնամիների ախտիվության դեմ պայքարն ուժեղացնել և հակահարված կազմակերպել: Կուլակները կաշխատեն այս կամ այն կերպ արտադրական խորհրդակցության կամ ագրոլիազորության շարքերը խցկվել: Այստեղ նրանց պետք է վճռական հակահարված հասցնել:

Պետք է չքավորների ժողովներում առաջ քննել ագրոլիազորների ու գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների անդամների թեկնածությունը:

Կարելի է ընտրությունները հարմարեցնել գարնա-

նացանի առթիվ գյուղերում յեղող արտադրական խորհրդակցությունների ժամանակներին:

Խորհուրդների և ամբողջ գյուղական հասարակության վերջին անելիքն է՝ ամբողջ ընտրական կազմի գյուղատնտեսական անգրագիտությունը լիկվիդացիայի ենթարկելու համար կուրսեր ու սեմինարներ կազմակերպել: Կազմակերպել գյուղատնտեսության վերաբերող դասախոսություններ:

Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի  
farsnoluar՝ Ա. ՇԱՀԲԱՋՈՎ

Ադրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի  
Կազմբաժնի վարիչ՝ ԻՎ. ՍՎԻՐԻԳՈՎ



## II.

ԱՊՐԲԵՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՊՐԵՋԻ-  
ԴԻՈՒՄԻ 1929 ԹՎԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի

Վ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

**ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻՆ ԿԻՑ ԳՅՈՒՂԱ-  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿ-  
ՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿ-  
ՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ**

1. Գյուղացիության հիմնական մասսաները գյուղա-  
կան տնտեսության բարձրացման գործին քաշելու համար  
գյուղխորհուրդներին կից գյուղատնտեսական արտադրա-  
կան խորհրդակցություններ են կազմակերպվում:

2. Գյուղխորհուրդներին կից արտադրական խորհր-  
դակցությունների հիմնական նպատակն է՝ աջակցել գյու-  
ղական տնտեսության ամբողջ սխտեմի վերակառուց-  
մանը, այնտեղ պլանային սկզբունքն արմատավորելուն,  
տնտեսության կոլլեկտիվ ձևերի զարգացման և բերքատը  
վություն ու գյուղական տնտեսության ապրանքայնու-  
թյան բարձրացմանը: Այդ բոլորը իրականացնելու հա-  
մար՝

1) Հողաշինարարության, հասարակական մոնոպոլ  
ցանքսափոխության անցնելու, վոռոգման, անտառատն-  
կության գործերը կատարելու միջոցներ են մշակում:

2) գյուղացիական տնտեսությունների կոլլեկտի-  
վացման ու արտադրական կոոպերացման, ինչպես և  
բառակային, չբավորական ու սակավակարող միջակա-  
յին տնտեսություններին ոգնելու միջոցներ են նշում:

3) զարնան ու աշնան ցանքսային կամպանիաների  
և ցանքսերի տարածություններն ընդարձակելու պլաննե-

րեն են մշակում: ինչպես և սերմեղենով ապահովելու  
կենդանի ու անկենդան ինվենտարի ու գործիքների նը-  
պատահանարժար կերպով ոգտագործելու, ապա և այդ  
կամպանիաները պատրաստելու մյուս միջոցների պլան-  
ներն են մշակում:

4) քննում են ագրոմիխիմումը գործնականորեն կի-  
քառելու միջոցները (սերմեղենի զտում և ախտահանում,  
յերկու արտերի միջի խոտերը հնձելը, քաղհան, սառնա-  
վար և այլն), գյուղացիություն լայն մասսաներին պար-  
զաբանելով այդ միջոցների նշանակությունը և ոժան-  
դակելով այդ միջոցները յերկրագործի աշխատանքի  
պրակտիկայում արմատավորելու:

5) նշում և քննում են հողը մշակելու, գետինը մը-  
շակելու ու բերքը հավաքելու համար լավագույն մեքե-  
նաներ ու գործիքներ գործադրելու, տեխնիքական կուլ-  
տուրաներ, լավագույն և մաքուր տեսակի սերմեր մտց-  
նելու միջոցները: նշում և քննում են ցանքսերի պահ-  
պանությունը, պայքարն անպետք խոտերի ու վնասա-  
տուների դեմ, մարգագետինների, պարտիզպանության,  
այգեպանության ու գյուղական տնտեսության մյուս  
ձյուղերի բարելավումը:

6) նշում ու քննում են ցանքսերի պայմանագրման  
(կոնտրակտացիա), վարկերը բաշխելու, գյուղատնտեսա-  
կան համապատասխան գործիքներ բերելու ու բաշխելու  
պլանները:

7) սերմի հասարակական ֆոնդեր, վարձատու կե-  
տեր, ախտահանական ու սերմագտիչ կետեր կազմակեր-  
պելու, ուժեղ արհեստանոցներ և տնտեսության հաջող-  
զարգացմանը նպաստող ուրիշ եյական—անհրաժեշտ հիմ-  
նարկներ կազմակերպելու միջոցներ են մշակում:

8) քննվում են մանր ու խոշոր անասնապահությու-  
նը բարելավելու, զտարյուն ու բարելաված արտադրող-  
ներ մտցնելու, անասունների համաճարակ հիվանդու-  
թյունների դեմ կովերը և այլն:

79-9206-67





9) նշում և քննում ե կոլխոգները, հողային ընկերությունների ու բերքը բարձրացնելու համար ցանոցների առանձին խմբերի հետ պայմանագիր կնքելու կամ պայման վարելու պլանները.

10) խորհուրդների կողմից ընդունված հասարակական ագրոմիջոցների աշխատանքի վրա մշտական հսկողություն են ունենում.

11) ջրովի ռայոններում գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները պետք է գործնականորեն խստիվ հերթ սահմանեն, առաջին հերթին ջուրը չբավորությունը տալով.

12) պայմանագրման ռայոններում պետք է ամեն կերպ աջակցել ու գործնականորեն ոգնել միջերոգ որգաններին, լայն ագիտացիա մղելով աշխատավորների շարքերում՝ ամենամեծ չափերով պայմանագրումներ ա-նելու.

13) ամենից առաջ բամբակի ռայոններում հաշվե առնելով բամբակի տնտեսության զարգացման բացառիկ կարևոր նշանակությունը ինդուստրիացման համար, պետք է գործնականորեն մշակել բոլոր հնարավորությունները՝ այդ արժեքավոր տեխնիկական կուլտուրան լայնորեն ծա-վալելու համար: Պետք է սառնավար անել, շարքացան ա-նել, պարտադիր կերպով ագրոմինիստմը մտցնել, ջրի առուները նորոգել ու նորերն անցկացնել, արտոնու-թյուններ տալ բամբակ ցանոցներին, նրանց գյուղատն-տեսական գործիքներ, արդյունաբերական ապրանքներ մատակարարել, և այլն. ահա մոտավորապես բամբակի վերաբերող այն բոլոր հարցերը, վոր պետք է գործնա-կանորեն արտացոլեն գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների աշխատանքում.

14) աջակցում են գյուղատնտեսական ցուցահանդես ներ կազմակերպելուն ու գյուղական տնտեսության գանադան ճյուղերի վերաբերմամբ մրցություններ կա-տարելուն.

15) մշակում են գյուղական տնտեսության գրու-թյան ու զարգացման հետ կապված բոլոր հարցերը, ինչ-պես և լսում ու քննություն են առնում գյուղատնտես-ների, հողաշինարարների, անասնաբուժերի, սովխոգների կառավարիչների, կոլխոգների, կոոպերատիվների ու մյուս ների ներկայացուցիչների զեկուցումները.

16) նայում և քննություն են առնում աշխատավոր-ների կողմից գյուղական տնտեսության հարցերին վերա-բերող առաջարկությունները.

17) բնակչության միջոցները գյուղական տնտեսու-թյունը վերականգնելու առանձին միջոցառումների շուրջը համախմբելու գործի նախաձեռնողներ են հանդիսանում:

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿ-ՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Անդամության իրավունքով գյուղատնտեսական ար-տադրական խորհրդակցության մեջ են մանում՝ գյուղա-տնտեսական սեկցիաների անդամները, բոլոր ագրոգոր-ծիչներն առանց բացառության, վարկային ընկերություն ների վարչության անդամները, կոոպերատիվների, կո-լխոգների վարչությունների անդամները, փոխգկոմիտեների, առանձին ընկերությունների անդամները, որինակելի տնտեսություն վարող բամբակ ցանողները, բատրա-կային կոմիտեների նախագահները, պատվիրակուհիները, ամբողջ գյուղատնտեսական ակտիվն ու ագրոլիազորները:

Արտադրական խորհրդակցությունների անձնական կազմը հաստատվում է համապատասխան գյուղխորհրդի կողմից:

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿ-ՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցու-թյունները ղեկավարում են համապատասխան գյուղ-խորհուրդները:



2. Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները գումարում են խորհուրդները պարբերաբար, հաստատ վորոշած ժամանակներում, բայց ամսական 2 անգամից վոչ պակաս:

3. Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների աշխատանքի ղեկավարության համար՝ խորհրդակցություններն իրանց կողմից պրեզիդիում են ջոկում 5 հոգուց բաղկացած, վորտեղ մտնում է խորհրդի նախագահը, վոր և նախագահ է արտադրական խորհրդակցության պրեզիդիումի:

4. Արտադրական խորհրդակցության պրեզիդիումն արտադրական խորհրդակցությունում քննվելիք հարցերն է պատրաստում, հետևում է, թե առանձին կազմակերպություններն ինչպես են կատարում արտադրական խորհրդակցությունների վորոշումները:

5. Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների բոլոր վճիռները համապատասխան գյուղխորհուրդ են մտցնվում վերջնականապես հաստատելու համար, վորտեղ քննվում են վոչ ուշ՝ քան մի շաբաթվա ընթացքում: Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների պրեզիդիումը հետևում է, վոր խորհրդում իր ժամանակին քննվեն վերջինիս հաստատման յենթակա հարցերը:

Ադր. Կենսր. Գործադիր Կոմիտեի նախագահի  
սեղապահ՝ Մ. ԵՖԵՆԴԻՅԵՎ

Ադր. Ժողկոմխորհի նախագահի սեղապահ՝  
Դ. ԲՈՒՆՅԱԹ-ԶԱԴԵ

Ադր. Կենսր. Գործադիր Կոմիտեի ֆարսուղար՝  
Ա. ՇԱՀԲԱԶՈՎ

## ԻՆՉՈՒՄՆ Ե ՎԱՅԱՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵ- ՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՍՑՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Գարնան գյուղատնտեսական կամպանիան յեվ առանձնապես բամբակի ցանքսը սնեսական—ֆադաֆական ահագին նշանակություն ունի: Կուլակային ու հակա-խորհրդային սարերն ամեն կերպ խոչընդոտ են հանդիսանում այդ աշխատանքները կատարելուն. նրանք կանգ չեն առնում գյուղական սնեսությունը բարձրացնելու համար խորհրդային իշխանության նախաձեռնությունները պրովոկացիայի յենթարկելու առաջ:

Կուլակը դեմ է ցանքային սարածություններն ընդարձակելուն: Կուլակը դեմ է սերմն ախսահանելուն յեվ զսելուն: Կուլակը դեմ է մեր ագրոկուլտուրական միջոցառումներին: Կուլակն ագիտացիա է առնում, վորպես թե վնասաբեր է բամբակային սնեսությունը:

Այդ պատճառով գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների ամբողջ աշխատանքն իր բոլոր գործնական մոմենտներում պետք է ցայտուն կերպով արահայտված դասակարգային բնույթ կրի:

Գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները պետք է անխնա կերպով պայքարեն կուլակների ամեն ծեսակ գործողությունների դեմ, կուլակների, վարմն գյուղում մեր սնեսական ձեռնարկումների դեմ ևն դուրս գալիս, պետք է մերկացնել յեվ սուր, վնասական հակահարված տալ նրանց վոսնձգություններին:

Աշխարհիս վրայի մեր առաջին աշխատավորների պետությունը իր սնեսական զարգացման մեջ պետք է ամենակարն ժամանակամիջոցում վոչ միայն հասնի կապիտալիսական յերկրներին, այլ յեվ առաջ անցնի:



Դրա մեջ է կայանում սոցիալիստական շինարարության փառաբանումն ու սնտեսական կարեվորագույն խնդիրներից մեկը: Սակայն արատաւարաբար, մանավանդ գյուղական սնտեսարարական կազմակերպումն ու սեյսնիկան դեռ յեւս մեզնում շարունակվում է համեմատաբար ցածր մակարդակի վրա լինել:

Հենց իրա, աշխատավոր գյուղացիության անելիքն է վերակառուցել գյուղական սնտեսարարությունը, անցնել մշակման ժամանակակից կուլտուրական ձեւերին, դեռ գցել, հրաժարվել արտից, անցնել կոլեկտիվներին: Գյուղատնտեսական արատաւարական խորհրդակցությունների նպատակն ու անելիքը կատարելապէս պարզ է: Գյուղատնտեսական արատաւարական խորհրդակցությունների առաջ դրված խնդիրները չափազանց բնորոշակ են:

Այդ բազմաթիւ խորհրդում դեռ ու դեռ չընկնելու համար մեկ վորպեսզի գյուղատնտեսական արատաւարական խորհրդակցություններն ավելի մեծ արդյունք սան, գյուղխորհուրդները պէտք է այդ խորհրդակցությունների աշխատանքի որացուցային պլան մշակեն տրված ժամանակամիջոցի, որինակ՝ զարման 3 ամիսների համար:

Աշխատանքի այդ պլանում առաջին տեղը պէտք է բռնեն այն ամենակարեւոր խորհրդերը, վոր ամենամոտ ժամանակներում պէտք է կյանքի մեջ մտցուցեն:

Որինակ՝ այդպիսի խորհրդեր են հանդիսանում հունվար, փետրվար, մարտ ամիսների համար.—

ա) զարմանացանքի կամպանիայի պլանը.

բ) կյանքի մեջ մտցնել բերատւութիւնը բարձրացնելու միջոցները, կատարել ագրոմիկոնումը.

գ) ցանքերի նախորոք պայմանագրման (կոնտրակտացիայի) պլանը.

դ) գյուղացիական սնտեսարարությունները կոլեկտիվացնելու յեւ արատաւարական կոոպերացման միջոցառումներ.

յե) սերմերէն մասակարարելու, ժամանակին վարելու յեւ ջրի առումները նորոգելու միջոցառումների պլանը

յեւ գ) գյուղատնտեսական գրագիտության կուրսեր կազմել ու քառախոսություններ կարդալ:

Յերեք ամսվա համար նշված այդ խորհրդերը նախորոք պէտք է մշակի գյուղխորհուրդն ու արատաւարական խորհրդակցության պրեզիդումը:

Վերելքը բնորոշ խորհրդերի նախնական մշակումն ու գյուղատնտեսական արատաւարական խորհրդակցությունների նիստերում այդ խորհրդերի մշակումը պէտք է տարվի ի նկատի առնելով, վոր

ամեն կերպ պէտք է բնորոշակ վի բամբակի ցանքային տարածութիւնը, ամեն կերպ բարձրացվի տրված ուայունի սնտեսարարությունների բերատւութիւնը, ամենամեծ ոգնութիւնը հասցրվի չֆավոր յեւ սակավակարող միջակ տնտեսութիւններին՝ կոոպերացման ու կոլեկտիվացման հիմունքներով. ու ամենամեծ ու ամենալավ կերպով ոգտագործել հասարակական ինվեստարը, լծկանն ու սերմը. բնակչութիւնը միջոցներն ամեն կերպ մղել դեպի վերելքի հիշված խնդիրներին իրագործումը:

Գյուղխորհուրդն առանձին ուշադրություն պէտք է դարձնի գյուղատնտեսական արատաւարական խորհրդակցության համար գործիչներ բնտեսելուն: Պէտք է ամեն բան տնել, վոր այն կազմակերպությունները, վորոք պէտք է իրանց ներկայացուցիչները արատաւարական խորհրդակցության ուղարկեն վորպէս տնդամ, ուղարկեն դասակարգային յեւմիւրած—կայուն գործիչներ, պնդիւններին, վոր նախաձեռնութիւն վողի ունեն, ցավում են խորհրդային պետության ցավերով յեւ ուրախանում են նրա ուրախությունով:

Միւսիայն հասարակական աշխատանքում վորոք ամ գյուղատնտեսական արատաւարական խորհրդակցությունների ակտիւ կազմը կարող է տրված ուայունի գյուղական սնտեսարարական բարձրացման նիւտ ուղիները գծել յեւ գյուղացիական մաստան կազմակերպել այդ խնդիրների շուրջը:

Հաւելի առնելով գյուղատնտեսական արատաւարական խորհրդակցությունների առաջ դրված խնդիրների բացառիկ կարեւորութիւնը, պէտք է տնդի խորհրդային ու հասարակական կազմակերպություն-



ներ ամենաուշադիր վերաբերմունք ցույց տալով խորհրդակցու-  
թյուններին:

Դյուղխորհուրդներին կից գյուղատնտեսական արտադրական  
խորհրդակցությունները նոր կազմակերպություններ են յեղ սկզբնե-  
րում վստահությամբ չեն վերաբերվի նրանց: Տեղերի պատրաստակու-  
թյունն է միանգամից հաստատուն կերպով արտադրական խորհ-  
րդակցությունների աշխատանքը դնելով՝ այդ տեսակ նկատարող ան-  
վստահության առաջն առնել:

### III.

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱԳՐՈՒԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### 1. ՆՊԱՏԱԿԸ ՅԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

§ 1. Տեղերում՝ գյուղերում, գյուղացիական արտա-  
դրական, կոոպերատիվ, տնայնագործական միություննե-  
րում և վարկային գյուղատնտեսական ընկերություննե-  
րում ընտրվում են ագրոլիազորներ՝ ներկա կանոնադրու-  
թյան սահմանած կարգով: Այդ բանի նպատակն է աշխա-  
տավորության լայն խավերն անմիջապես մասնակից ա-  
նել բերքատվությունը բարձրացնելու աշխատանքին, նաև  
նրա համար, վոր հասարակական վերահսկողություն լինի  
առանձին տնտեսությունների վրա՝ ժամանակին և ճշգը-  
րիտ կատարելու ագրոտեխնիկական բարելավումները, վո-  
րոնք անց են կացվում պայմանագրություններով, նույն-  
պես և վերահսկողություն լինի, թե ինչպես են կատար-  
վում պարտադիր վորոշումները (ագրո-հրամանները),  
գյուղական համայնքների (ժողովների) վորոշումները, ագ-  
րո-արտադրական բնույթ կրող պայմանագրերը և այլն:

§ 2. Ագրոլիազորները մի կազմակերպություն են,  
վորի ոգնությամբ գյուղացիական մասսան անմիջական  
մասնակցություն է ունենում գյուղական տնտեսության  
բարձրացման և բերքատվությունն ավելացնելու գործին:  
Միաժամանակ ագրոլիազորները ստորին գյուղատնտեսա-  
կան գործիչների մոտիկ ոգնականներն են հանդիսանում,  
վերջիններիս ոգնություն են ցույց տալիս՝ ագրոմիջոց-  
ները կյանքում իրագործելու համար:

§ 3. Ագրոլիազորների կազմակերպումը հատուկ նը-  
շանակություն ունի բամբակային ռայոններում: Համա-



ձայն բամբակաբուծութեան մասին տրված հրահանգները՝ բամբակային ռայոններում ագրոլիազորների պարտականութիւնների մեջ են մտնում հետեւյալ խնդիրները.— բամբակային ցանքսերի պլանի իրագործման ստուգումը, բամբակային ցանքսերն ամենամեծ չափով ընդարձակելուն և նրա բերքատուութեան բարձրացմանն աշակցելը:

## 2. ԱԳՐՈԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

§ 4. Գյուղում ագրոլիազորներն ընտրվում են գյուղական ժողովների կողմից՝ առաջավոր բամբակաբուծները և յերկրագործներից, վորոնք աչքի են ընկել հասարակական աշխատանքում և իրենց անձնական աշխատանքով տնտեսութիւնն օրինակելի տանելով՝ նպաստում են լավացրած տեխնիկական ձևերը գյուղական տնտեսութեան մեջ մտցնելուն. նրանք պետք է լինեն չքավորների, բաւրաւների և միջակների թվից:

Ագրոլիազորներն են ընտրվում են մի տարի ժամանակով. յեթե նրանք իրենց վրա դրված պարտականութիւնները կատարելիս ակտիվութիւն են ցույց տալիս, կարող են վերընտրվել հետագա ժամանակի համար: Յեթե ագրոլիազորն անգործունեյա է, ընտրողները կարող են նրան հետ կանչել մինչև ժամանակի լրանալը:

§ 5. Մեծ բնակեցրված տեղերը, գյուղերը բաժանվում են ռայոնների, 25—30-ական ծխից, վորտեղ և ընտրվում են ագրոլիազորները:

§ 6. Մեծ գյուղական համայնքներում ագրոլիազորների ընտրութիւնը կատարվում է թաղային ժողովներում, այնպես վոր ամբողջ համայնքի բոլոր ներկայացուցիչները մասնակցեն:

§ 7. Հասարակ արտադրական կոոպերատիվ կազմակերպութիւններում (մեքենական, սերմային, վորոգման և այլ ընկերութիւններում) ագրոլիազորներն ընտրվում են այլալ կոոպերատիվ միութեան ընդհանուր ժողովներում:

Ծանոթութիւն.— Հասարակ կոոպերատիվ միութեան լիազորներն իրենց աշխատանքը՝ ագրոմիջոցների վերաբերմամբ՝ սերտ կերպով կապում են միութեան վարչութեան և խորհրդի հետ:

§ 8. Վարկային գյուղատնտեսական ընկերութիւններում ագրոլիազորները, — թվով 3 հոգի, — ընտրվում են ընկերութեան խորհրդի կողմից՝ հենց իրա կազմից: Վարկային գյուղատնտեսական ընկերութիւնների ագրոլիազորները պարտավոր են՝ հասարակական վերահսկողութիւն ունենալ և հետեւել, թե ինչպես են կատարվում՝ տվյալ գյուղատնտեսական ընկերութեան առանձին իրավական անդամները (կոլխոզները, մեքենական և ուրիշ ընկերութիւնները) ագրիկուլտուր-արտադրական բնույթ ունեցող պայմանագրութիւնները, վոր կապված է նրանց վարկավորման հետ. նրանք նույնպես հետևում են իրանց վարկավորման հետ. նրանք նույնպես հետևում են մատակարարման և վաճառման գործողութիւնները և պայմանագրութիւնները:

Ծանոթութիւն.— Վերաբերելի ագրոլիազորներն ավելի լավ ծանոթանան գյուղատնտեսական — վարկային կոոպերացիայի աշխատանքների հետ՝ գյուղական տնտեսութեան բացձրացման, բերքը շահական տնտեսութեան միջոցները գորտադրելու վերաբերմամբ՝ գյուղատնտեսական վարկային ընկերութեան գործունեյութեան ռայոնում ագրոլիազորները հրավիրվում են մասնակցելու վերահսկիչ խորհուրդների նիստերին, յերբ քննվում են՝ գյուղատնտեսական ընկերութեան աշխատանքի տարեկան պլանները, ցանքսային և պայմանագրային կամպանիաների պլաններն ու դրանց վերաբերյալ հաշվետուութիւնները:

§ 9. Ագրոլիազորների ընկերութեանը մասնակցում են բնտրելու և ընտրվելու իրավունք ունեցող բաղադրյալները: Ընտրութիւններին չեն կարող մասնակցել և



չեն կարող ընտրվել այն անձերը, վորոնք զրկված են ընտրական իրավունքից:

§ 10. Ագրոլիազորների աշխատանքին ընդհանուր կերպով հետևելու, նրանց ղեկավարելու համար գյուղական խորհուրդները՝ իրենց տերրիտորիայի սահմաններում՝ իրենց կազմից ընտրում են ավագ ագրոլիազոր:

### 3. ԱԳՐՈԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 11. Վորպեսզի գյուղերում ագրոլիազորները կատարեն իրենց պարտականությունները, նրանց տրվում են հետևյալ իրավունքները և նրանց վրա դրվում են հետևյալ պարտականությունները.—

ա) ստուգել, թե ինչպես են կատարվում ագրոկուլտուր-արտադրական բնույթ ունեցող պայմանագրային և այլ պարտականությունները. ստուգել, թե ինչպես են կատարվում ընդհանուր ժողովների այն վորոշումները, վոր վերաբերում են գյուղական տնտեսության տեխնիկայի լավացմանը և բերքատվության բարձրացմանը.

բ) յեթե առանձին տնտեսություններ ճիշտ չեն գործադրում այդ պահանջները, տալ նրանց հարկավոր ցուցմունքները՝ հիմնվելով մոտակա գյուղատնտեսից ստացած հրահանգների վրա.

գ) յեթե աշխատավորները չեն կատարում հանձն առած պարտականությունները և բերքատվությունը բարձրացնելուն վերաբերող վորոշումները, պիտի այդ մասին հայտնել գյուղական խորհրդին, գյուղատնտեսին և ընդհանուր ժողովին՝ ազդեցության համապատասխան միջոցները ձեռք առնելու համար:

§ 12. Ագրոլիազորները մասնում են գյուղխորհուրդների գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների կազմի մեջ, իբրև այդ խորհրդակցությունների անդամ:

### 4. ԱԳՐՈԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԿԱՊԸ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՇԵՏ

§ 13. Գյուղական և այլ ագրոլիազորների ամբողջ աշխատանքը միացվում է գյուղխորհուրդների գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների մեջ:

§ 14. Գյուղական ագրոլիազորները կապվում են գյուղխորհրդի հետ ավագ ագրոլիազորների միջոցով: Ավագ ագրոլիազորների վրա պարտք է դրվում կազմակերպել գյուղական ագրոլիազորությունը և ագրոլիազորների գործունեության ստուգումը: Ավագ ագրոլիազորներն իրենց աշխատանքում հենվում են իրենց ռայոնի ագրոլիազորների վրա:

Ծանոթություն 1. — Գյուղական տնտեսությունների վերակառուցման հետ կապված հարցերը մշակելու համար՝ գյուղխորհուրդների գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունները հրավիրվում են ագրոլիազորների հետ միասին, վոչ ուշ, քան 3 ամիսը մեկ անգամ:

Ծանոթություն 2. — Ագրոլիազորների աշխատանքի փորձը ի մի գումարելու և արդյունքները մշակելու համար՝ դայրագործկոմներին կից հրավիրվում են ագրոլիազորների ռայոնական խորհրդակցություններ՝ տարեկան մեկ անգամ:

§ 15. Տարեկան 2 անգամից վոչ պակաս ագրոլիազորներն իրենց աշխատանքի մասին հաշիվ են տալիս ընտրողներին՝ գյուղխորհուրդների լայնացրած պլենումներում և լայն ժողովներում, իսկ կանոնադրային միություններում — անդամների ընդհանուր ժողովում. այդ հաշվետվությունները պիտի հարմարեցնել «Բերքի տունին» կամ ցանքսային խորհրդակցություններին:



## 5. ԱԳՐՈԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԿԱՊԸ ՍՏՈՐԻՆ ՆՈՂՈՐԳԱՆ- ՆԵՐԻ ՇԵՏ

§ 16. Տեղական հողորդանների վրա պարտք ե դըր-  
վում՝ գյուղատնտեսական պաշտոնյաների միջոցով հրա-  
հանգել ագրոլիազորներին՝ նրանց վրա դրված պարտա-  
կանությունները կատարելու վերաբերմամբ. հետագա-  
յում ել նրանց պիտի աջակցություն և ոգնություն ցույց  
տրվի այդ կողմից:

## 6. ԱԳՐՈԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԽՐԱԽՈՒՍԵ- ԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 17. Ագրոլիազորներին խրախուսելու նպատակով,  
յեթե նրանք ակտիվ գործել են բերքատվությունը բարձ-  
րացնելու, իրենց տնտեսությունն ավելի լավ տանելու,  
ագրոհսկողության նկատմամբ, — գյուղատնտեսական ար-  
տադրական խորհրդակցությունների և գյուղատնտեսների  
առաջարկով գյուղխորհուրդները կարող են նրանց այն-  
պիսի արտոնություններ տալ, վորոնք նպաստում են նը-  
րանց գյուղական տնտեսության լավացմանը. այսպես՝  
առաջին հերթին արտոնյալ պայմաններով փոխառվու-  
թյուն ստանալու իրավունք, ազնիվ տեսակի սերմեր-  
գյուղատնտեսական մեքենաներ և գործիքներ, ազնվաց-  
ցեղ անասուններ և այլ ստանալու իրավունք. նույնպես  
և կարող են փողով վարձատրվել միասնական գյուղատն-  
տեսական տուրքի 1 տոկոսային հատկացումից կազմված  
Ֆոնդից՝ համապատասխան շրջանային հողվարչության փո-  
րոշմամբ:

§ 18. Ներկա կանոնադրությունը գործադրել հրա-  
տարակման մոմենտից:

## ԻՆՉԻ ՀԱՄԱՐ ԵՆ ԸՆՏՐՎՈՒՄ ԱԳՐՈԼԻԱ- ԶՈՐՆԵՐԸ

Ստորին խորհուրդներն իրենց ապարասով անկարող  
են ընդգրկել բոլոր ճնշությունները, սուգել թե նրանց  
ինչպես են կասարում իրենց պարսականությունները  
բերհասվությունը բարձրացնելու վերաբերմամբ:

Այդ դերը կասարելու են կոչված ագրոլիազոր-  
ները:

Ագրոլիազորների ինստիտուտի կազմակերպումը պիտի  
տրվի դրա մասին յեղած կանոնադրության հիման վրա  
հետեվյալ կերպով. —

Գյուղխորհուրդները հասարակական կազմակերպու-  
թյունների հետ միասին իրենց ուսյունի բոլոր գյուղերում  
ընդհանուր ժողովներ են անում, ուր բացասում են  
գյուղական ագրոլիազորների նպասակն, անելիքներն,  
իրավունքները յեվ պարսականությունները, ապա կասա-  
րում են ընտրությունները, գործի փաշելով ամենաակտիվ  
առաջավոր յերկրագործներին յեվ բամբակաբուծնե-  
րին:

Ընտրությունները պիտի հարմարացնել այն ընդհա-  
նուր ժողովներին, վոր գումարվում են բերհասվության  
վերաբերմամբ ձեռք առնելիք միջոցները բննելու յեվ վո-  
րոշելու համար:

Ագրոլիազորների ընտրությունները վերջացնելուց  
գյուղխորհուրդները յեվ դայրագործկոմը կազմակերպում  
են ագրոլիազորներին հրահանգելու գործը, այդ աշխա-  
տանքին փաշելով գյուղաճնշեսական ծառայողներին: Ագ-  
րոլիազորներին հրահանգելու գործը կասարվում է  
կուրսեր կազմակերպելու, ագրոլիազորների ժողովների  
յեվ նրանց գրականություն հասցնելու միջոցով:



Ագրոլիագորներ ընտրելով դեռելիս չի վերջանում գյուղխորհուրդների անելիքը, ագրակոնսրոյ կազմակերպելու յեղ ղեկավարելու գործում:

Գյուղխորհուրդը նույնպես պիտի ստուգի, թե ինչպես է կազմակերպվում ագրոլիագորների ինստիտուտը գյուղասնտեսական կոոպերացիայում յեղ ալլն: Գյուղասնտեսական կոոպերացիայի ագրոլիագորների միջոցով ստորին խորհուրդը պիտի սերս մոտենան գյուղասնտեսական կոոպերացիային, նրան փաշեն գյուղական սնտեսության վերակառուցման յեղ բերասվության բարձրացման ալլն ընդհանուր աշխատանքին, վոր խորհուրդը տանում է սվյալ ուայոնում:

Այս գործում ստորին խորհուրդների ճիմնական խընդիրը կայանում է նրանում, վոր գյուղասնտեսական կոոպերացիան լայնացնի արտադրական կոոպերացումը, չբավորա-միջակային մասսաներին կազմակերպի կոլխոզներում, մեքենական ընկերություններում, նույնպես յեղ ավելի լավ արտադրական ծառայություն մատուցի ալլ կազմակերպություններին:

Այդպիսով բոլոր գյուղխորհուրդների, դայրագործկումների յեղ գյուղական հասարակայնության, գլխավորապես ագրագործիչների առաջ խնդիր է դրվում կազմակերպելու աշխատանքը նոր, կոլեկտիվ սկզբունքներով, գյուղխորհրդի շուրջը համախմբելու գյուղխորհրդի ամենալավ, ակտիվ մասին յեղ նոր գարնանացանի կամպանիայի ժամանակ վնուական մարտի յելնելու կուլակների դեմ:

Պիտի նկատի առնել, վոր կուլակը կաշխատի այս կամ այն չափով մուտք գործելու ագրոլիագորների ինստիտուտի մեջ, նայել գյուղասնտեսական արտադրական կազմակերպությունները. կուլակը կաշխատի, յեթե վոչ ուղղակի, գոնե կուլակների կողմնակիցների միջոցով տեղյակ լինել յեղ արտադրական խորհրդակցության յեղ ագրոլիագորների աշխատանքներին:

Վոչ մի կուլակի, նրա կողմնակցի յեղ ընդհանրապես վոչ մի հակահասարակական տարրի քույլ չենք տեսնելու նոր կազմակերպությունների մեջ:

Արտադրական խորհրդակցությունների յեղ ագրոլիագորների ընտրության վրա կենտրոնացնենք գյուղի չփավորների, բասրակների յեղ միջակների ուշադրությունն ու առաջ փաշենք դասակարգայնորեն—կայուն բասրակներին, չփավորներին յեղ միջակներին:

Բայց դա հիմնական հարցի լուծման միայն ձեղն է: Գլխավորը ալլ ամբողջ ընտրական կազմին, նույնպես յեղ գյուղխորհուրդների ու բասրակային կոմիտեների կազմին յեղ ալլն տարրական ագրոհասկացողություններ սովորեցնելն է: Պետք է նրանց ագրոհասկացողությունը վերացնել կուրսեր յեղ դասախոսություններ կազմակերպելու միջոցով:

## „ԱԳՐՈՄԻՆԻՍՏԻՍԻ“ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչ է ագրոմինիստիզմը:

Դա գյուղական տնտեսության մեջ մի շարք միջոցներ են, վոր գյուղացիները պարտադիր կերպով պետք է կատարեն՝ բերքն ավելացնելու համար:

Արևմուտքի բոլոր յերկրներում, վորտեղ բերքը Ագրբեշանի բերքից 3—4 անգամ ավելի է ստացվում, պարտադիր վորոշումներ կան, վորին պետք է յենթարկվեն առանձին տնտեսությունները: Յեղ բերքի ալլն բարձրությունը, ինչպես Գերմանիայում, վորտեղ մի գեսայտինից 150 փութ ցորեն են ստանում, մեծ չափով պարտական է ալլն հանգամանքին, վոր յերկրագործին պարտադրում են՝ իր տնտեսությունն ուղիղ տանելու:

Միանգամայն պարզ է, վոր «ագրոմինիստիզմ» մըտցրվում է առաջին հերթին հենց իր—գյուղացու ոգտի համար:

Ագրբեշանի գյուղական տնտեսության աչքի ընկնող առանձնահատկությունը դաշտերի արհեստական վորոգ-



ման, ջրելու մեջ և կայանում: Վրոգման ջուրը կանոնավոր բանացնելուցն և գրեթե կախված ամեն ինչ, — թե ցանքսերի տարածության մեծութունը և թե բերքի ավելանալը:

Այդ և պատճառը, վոր Այրբեջանի ժողկոմխորհի գեկրետը մեծ չափով ուշ գրություն և դարձնում ջրի հաքցին: Զրային տնտեսությունը պետք և կանոնավոր կերպով կաղմակերպել, և դա յերկրագործների վրա վորոշ պարտականություններ և դնում:

Մեզ մոտ հողերի մի նշանավոր մասը մացառներով, թփուտներով և ծածկված: Այդ մացառները խանգարում են մի շարք աշխատանքներ կատարելու. խլում են ջուրը և պակասեցնում բերքը:

Ուստի հերկերը մացառներից մաքրելը նույնպես պարտադիր աշխատանք և, վորտեղ պետք և մասնակցեն բոլոր տնտեսությունները:

Զանազան փաստատուներ մեզ շատ մեծ փաստ են հասցնում: Նրանց տված փաստ ամեն տարի միլիոնների և հասնում. այդ փաստատուներից ազատվել կարելի և միայն այն դեպքում, յերբ բոլոր գյուղացիները պարտադիր մասնակցություն ունենան նրանց դեմ մղվող կրուկին:

Ապա մեր տնտեսությանը ահագին փաստ են հասցնում փաստատու խոտերը: Դրան վերջ տալու համար՝ բոլոր տնտեսությունները պարտավորվում են պայքար մղել անպետք խոտերի դեմ:

Բույսերի բերքատվությունը կախված և ցանքսի ժամանակից. ուստի և վորոշման մեջ ցանքսերի ժամանակի մասին ել և խոսվում:

Մենք մի առ մի չենք թվի, թե այդ ցանքսային կամպանիայում ինչ պարտադիր կետեր կան վորոշման մեջ (վորոշումը բերվում և ներքև), միայն մատնանշենք, թե ինչ կարգ և սահմանվում ագրոմինիստմը կատարելիս:

Ժողկոմխորհի կողմից ագրոմինիստմին վերաբերող դեկրետի հիման վրա, բոլոր շրջանային գործկոմները պարտադիր վորոշումներ են հրատարակում, վոր կարելի և գործադրել այս կամ այն շրջանի պայմաններին, առանձնահատկություններին նայած. այդ վորոշումները պետք և լայնորեն քննվեն գյուղական ընդհանուր ժողովներում և հետո արդեն կյանքի մեջ մտցվեն:

Այս կամ այն պարտադիր բարելավումը պետք և ամբողջ գյուղը կատարի մի անգամից:

Առանձին տնտեսություններից վոչ վոք չի կարող խուսափել տնտեսությունը կանոնավոր տանելու պարտականությունից:

Նա, ով կանոնավոր չի ոգտվում ջրելու ջրից, ով կոխվ չի մղում փաստատուների և անպետք խոտերի դեմ, նա վոչ միայն իրան և փաստ հասցնում, այլ հարեւաւմանին:

Այդ պատճառով այս կամ այն գյուղի բոլոր գյուղացիները ամբողջ հասարակությամբ՝ պետք և զանազան բարելավումներ մտցնեն:

Ինչքան վոր համերաշխությամբ տարվի այդ միացյալ աշխատանքն, այնքան ել շուտ կբարձրանա բերքը, վորն առաջին հերթին կավելացնի հենց իրա—գյուղացիական տնտեսության յեկամուտը:

## ԲԱՄԲԱԿԻ ԱԳՐՈՄԻՆԻՍՏԻՄԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻՔ ԴԵԿՐԵՏԻ ԾՐԱԳԻՐԸ

1. Սահմանել, վոր դաշտերը պարտադիր կերպով մաքրեն քարերից և կոպիճներից:

2. Պարտադիր համարել, վոր դաշտերը մաքրեն թրփերից (ցաքից, ուրենիներից, մոշից և այլն), ամեն մի տնտեսությունը տարեկան 50-ից վոչ պակաս:

3. Բամբակի փաստատուների դեմ կովելու նպատակով՝ մինչև մարտի 15-ը պարտադիր կերպով դաշտերից արմատախիլ անել բամբակի ցողունները, դա պիտի անել



մինչև հերկը, կամ հերկից հետո արմատները հավաքել:

4. Բամբակի փաստաւորները և աղտոտող խոտերի դեմ կռիւն նպատակով՝ յերգանդի (մեծնիկ) բույսերը պարտադիր կարգով հարել և աղտոտող խոտերն այրել:

5. Կոլխոզները և կոմպլեկսային միջոցները գործադրող ռայոնները պարտավոր են չբնակեցրած ռայոններում մինչև հունվարի 15-ը այն դաշտերում աշնանաձմեռային խորունկ (չորս վերջոկանոց) հերկ անել, ուր առաջ ուրիշ բույսեր եին ցանված (բամբակ չեւ ցանված):

#### ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՅԵՎ ԱՄԱՌԱՅԻՆ ՍԵՋՈՆՈՒՄ

6. Պարտադիր համարել առուները և վորոգման մանր ցանցը մաքրելը՝ ցեխից, բույսերից, յեղեգնից, թրփերից, փայտերից, նուշնպես և փակել հողապատնէշների բոլոր պատովածքները մինչև ապրիլի 1-ը:

7. Պարտադիր համարել ինժեներական սխառեմներում ջրահավաք ցանցի մաքրումը (ջրահավաք ցանցի մաքուր պահելը):

8. Արգելել ջրահավաք կոլեկտորներից ջրելը:

9. Բամբակ ցանելու վերջին ժամկետը սահմանել մայիսի 22-ը, իրավունք տալով շրջանային գործկոմներին այդ ժամկետը կրճատելու՝ տեղական պայմանների համաձայն:

10. Ցանքների ժամկետների համաձայն շրջանային գործկոմները սահմանում են արթային վորոգման սկիզբը և վերջին պարտադիր ժամկետները:

11. Բամբակի ցանքների վերաբերմամբ պարտադրել փերելը (պրորիվկա) և տախտակելը (պուլկա):

12. Կոմպլեկսային միջոցները գործադրող ռայոններում և կոլխոզներում բացի փերելուց և տախտակելուց՝ պարտադիր կերպով հերկել կուլտիվատորներով՝ կոմպլեքսային միջոցները գործադրող ռայոններում սեզոնի

ընթացքում յերկու անգամից վոչ պակաս, իսկ կոլխոզներում 3 անգամից վոչ պակաս:

13. Հողոգտագործողներին պարտադրել պայքարելու բամբակի մասսայական փաստաւորների դեմ՝ նրանց բուժիչ նյութի ապահովելու սահմաններում:

14. Արգելել, վոր բամբակը չքաղեն բացված սակուից (կորոբոչկա)՝ սակուի հետ միասին, նաև չքաղեն չբացված սակառներից՝ մինչև սահմանափակների վրա հասնելը:

15. Բամբակի քաղը պիտի արվի 3 անգամից վոչ պակաս և բամբակը պիտի հանձնվի ամեն մի քաղինն առանձին:

15. Շրջանային գործկոմներին իրավունք տալ, վոր ներկա վորոշման համաձայն հրատարակեն պարտադիր վորոշումներ, վորոնք պիտի նպաստեն բամբակային ցանքսերը շատացնելուն և բերքատուլությունը բարձրացնելուն:



## IV.

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԵՆՏՐ. ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ  
Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԻՆՔՆՍՍՏՈՒԳՐԱՆ ՅԵՎ  
ՀԱՇՎԵՏՈՒ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Խորհուրդները տնտեսական և կուլտուրական մեծ միջոցներ պիտի ձեռք առնեն, մասնավորապես, նրանք պիտի հաջողությամբ անց կացնեն զարնանացանի կամպանիան. ուստի Ազրբեջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահությունն անհրաժեշտ է համարում մինչև 1930 թվի մարտ ամիսը խորհուրդների հաշվետու կամպանիան յեվ նրանց գործունեության ինֆնասուզումն անց կացնել: Խորհուրդների հաշվետու կամպանիան և ինքնաստուգումը պիտի կազմակերպեն գյուղի չքավոր—բառակ—միջակ մասին՝ թե խորհուրդների շուրջը և թե այն գործնական հարցերի շուրջը, վորոնք կապված են զարնանացանի գյուղատնտեսական կամպանիայի հետ:

Ազրբեջանի գործկոմի նախագահությունը անհրաժեշտ է համարում, վոր խորհուրդները հաշիվ տան իրենց ընտրողների բոլոր բնակեցված կետերում, վորքան այդ կետերը փոքր լինեն:

Խորհրդի աշխատանքներին և հաշվետու կամպանիայի համար նյութեր պատրաստելուն ավելի մեծ չափով զբաղելու համար մասնականներին՝ ամեն մի գյուղխորհրդին կից կազմել ինքնաստուգման կոմիտեի 7—10 հոգուց՝ խորհրդի սեկցիաների ակտիվ անդամներից: Գյուղխորհրդի

հաշվետվությունը և ապագա աշխատանքի պլանը՝ մինչև գյուղական ժողովում դնելը՝ պետք է մշակվեն չքավորների ժողովներում, կանանց ժողովներում և բառարակային կազմակերպություններում:

Վորպեսզի աշխատավորները լիովին մասնակցեն հաշվետու ժողովներին Աշխտողկոմատը և շրջանային գործկոմները պարտադիր վորոշում պիտի հրատարակեն՝ հաշվետու ժողովների որերին բառարակներին և հովիվներին աշխատանքից ազատելու մասին:

Շրջանային գործկոմների նախագահությունները պիտի քննեն խորհուրդների հաշվետու կամպանիայի աշխատանքի պլանը շրջանի վերաբերմամբ և ապահովեն դայրաների և գյուղական խորհուրդների վերաբերմամբ շրջանի լիակատար ղեկավարությունը:

Ինքնաստուգումը և հաշվետու կամպանիան պիտի ընդգծեն խորհրդի աշխատանքի բոլոր կողմերը. դրա հաջողությունը խորհրդի աշխատանքի բոլոր կողմերը (հողժողովում, Լուսժողովում, մար ել ժողովումները (Հողժողովում, Լուսժողովում, փոխ-Սուղղժողովում, Ներքժողովում, Ֆինժողովում), փոխ-ժողովների կենտկոմը, Ազվոդխոզը և գյուղում գտնվող հասարակական կազմակերպությունները (Քեյբիրլիզին, Ազերիատիֆակը, Փամբուղբիրլիզին) պարտավորվում են ակտիվ մասնակցություն ունենալ՝ գյուղխորհրդի ղեկուցմանը կից ղեկուցում անելով կամ բացատրություններ տալով՝ իրենց կազմակերպության կամ տեսչությանը վերաբերող հարցերի մասին:

Ժողովմանները և հասարակական կազմակերպությունները մասնակցության ձևերը նախապես պիտի մշակվեն կենտրոնում և համաձայնեցվեն շրջագործկոմների նախագահությունների հետ:

Պարտավորեցնել Շրջագործկոմների նախագահություններին՝ հաշվետու կամպանիայի ժամանակաշրջանում կազմակերպեն գյուղխորհուրդներում և դայրաներում գյուղատնտեսական նվաճումների արտադրական ցուցահանդեսներ՝ այդ նպատակով ոգտագործելով ագիտացիները:



Այդ ժամանակաշրջանում պիտի նաև հետևել պատգամավորներին՝ խռկելով խորհուրդներից բոլոր խորթ, հակախորհրդային, բյուրոկրատական տարրերին, վորոնք խանգարում են գործը կամ անգործություն մտցնում։ Պիտի խռկել խորհրդի անդամների կազմից բոլոր նրանց, վորոնք այս կամ այն չափով մասնակից են բանդիտիզմին կամ գողությանը։

Խորհուրդների հաշվետու կամպանիան և ինքնաստուգումը պիտի լիովին և լայնորեն ծավալեն ինքնաքննադատությունը. նրանք իրենց ամբողջ աշխատանքը պիտի ծավալեն զարնանացանի կամպանիան հաջող տանելու և գյուղի չքավոր—միջակային մասսան կազմակերպելու նրա շուրջը։

Կենտգործկոմի Կազմբաժինը պիտի հրատարակի հանրամատչելի բրոշյուր—հրահանգ՝ խորհուրդների հաշվետու կամպանիայի և նրանց գործունեությունը ինքնաստուգման մասին։

Խորհուրդների հաշվետու կամպանիան տանելուն և ղեկավարելուն մասնակցելու համար դայրաները գործող ղեկ Ազրկենտգործկոմի անդամներին՝ մի ամիս ժամանակով դայրաների թվի համաձայն։

ԸՆԴՈՒՆՎԱԾ Ե ԱՐԻԲԵՋԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱ  
ԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՊՐԵՋԻԳԻՈՒ-  
ՄԻ ԿՈՂՄԻՑ ՅԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՒՄ Ե-  
ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒԴՆԵՐԻՆ, ԴԱՅՐԱԳՈՐԾԿՈՄ-  
ՆԵՐԻՆ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱԿՏԻՎԻՆ, ԱԳՐՈ-  
ԳՈՐԾԻՋՆԵՐԻՆ, ՎՈՐ ՍՐԱՆՈՎ ՂԵԿԱՎԱՐ-  
ՎԵՆ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒ-  
ԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՈՒՄՆ  
ՈՒ ԳԱՐՆԱՆ ԳՅՈՒՂԱՏՆԵՍԱԿԱՆ ԿԱՄ-  
ՊԱՆԻԱՆ ՏԱՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ։

(Արձանագր. Ազր. Կենտգործկոմի Պրե-  
զիդիումի, № 16)։

## ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒԴՆԵՐԻ 1920 ԹՎԻ ԳՈՐ- ԾՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՈՒ ՆԱՄՊԱՆԻԱՆ ՅԵՎ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՈՒՄԸ

### 1. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դյուղական խորհուրդների գործունեությունը հաշվե-  
տու կամպանիան և ինքնաստուգումը քաղաքական ու  
գործնական մեծ նշանակություն ունի։

Դյուղական խորհուրդների հաշվետվական կամպա-  
նիան և ինքնաստուգումը պետք է գլուղում լիովին  
ինքնաքննադատություն ծավալի։

Դյուղխորհուրդն ընտրողներին հաշիվ տալով՝ գյուղի  
հերթական քաղաքական խնդիրներն է պարզաբանում  
նրանց։ Մոբիլիզացիայի և յենթարկում նրանց ուշադու-  
թյունն ավելի հրատապ հարցերի շուրջը, կոլլեկտիվ կեր-  
պով գումարն է տալիս խորհրդի կատարած աշխատանքի,  
անաչառ կերպով նշում նվաճումներն ու թերությունները։  
Աշխատանքի փորձառությունն է փոխանակում։ Դյուղա-  
ցիների և գեկվիուհիների լայն մասսաներին սովորեցնում  
է պետություն կառավարելը։ Իր ապագա աշխատանքի  
պլանն է նշում։ Ուժեր է քաշում ու կազմակերպում  
այդ պլանն իրագործելու։ Բատրակների, չքավորների ու  
միջակների ուժերն է առաջ քաշում ու կազմակերպում  
կուլակության դեմ՝ հերթական խնդիրներն իրագործելու,



գյուղի արտադրական ուժերը բարձրացնելու և նրա սոցիալիստական վերակառուցման համար: Գյուղի աշխատավորական մասն է կազմակերպում գարնանացանի կամպանիան հաջող տանելու: Ոգնում է գյուղական աւտովի շարքերը մաքրելուն՝ խորթ և հակախորհրդային տարրից:

Գյուղական խորհրդի կողմից ընտրողներին արվող հաշվետվութիւնը վերջն է մի բանվորական ժամանակաշրջանի և սկիզբը՝ մի ուրիշի, նորի:

Ընտրողների առաջ արվող հաշվետվութիւնն եյուլիսին միայն նրանում չէ, վոր գյուղխորհուրդը հաշիվ է տալիս.— դա հարցի մի կողմն է. այլ և նրանում է, վոր հաշվետվութիւնն միջոցով կազմակերպվի չբավորութիւններ, նա միաձուլվի միջակի հետ, կոչ արվի նրանց միասնական ֆրոնտով կուլակի դեմ հարձակվել, պայքար մղվի հերթական խնդիրները կատարելու դժվարութիւնների դեմ:

Հաշվետվութիւնն ոգնութիւնամբ չբավորութիւնն ու բատրակութիւնը կազմակերպելու— ահա այս կարեւորագույն խնդիրն է, վոր մինչև այժմ ել շատ տեղերում չեն հասկանում խորհուրդների ու գայրանների գործիչները:

Տեղերում, գյուղխորհուրդների ու գայրանների գործիչներն ասում են. — մենք ժամանակ չունենք հաշվառական կամպանիան տանելու. մեզ մոտ հերթի են դրված ինքնատուրքավորումն ու գարնանացանի կամպանիան: Այդպես ասել՝ նշանակում է չհասկանալ խորհուրդների հաշվետու կամպանիայի կազմակերպչական ու դաստիարակչական դերը:

Այդ գործիչները չեն հասկանում, վոր խորհուրդների հաշվետու գեկուցումը պետք է կապել ինքնատուրքավորման և, վոր գլխավորն է, գարնանացանի կամպանիայի հետ, վորը հաջող տանելու համար չբավորութիւնն ու միջակների միաբան ոգնութիւնն է հարկավոր: Այդ

կամպանիան հաջող տանելու համար նաև գյուղի աշխատավոր մասի ուժեղ ու լայն մասնակցութիւնն է հարկավոր:

Այլերին. խորհրդի հաշվետու գեկուցումը վոչ միայն պետք է կապված լինի ցանքսային կամպանիայի հետ, այլ և այդ կամպանիան պետք է հաշվետու գեկուցման գլխավոր միտքը, բովանդակութիւնը լինի: Գարնանացանի կամպանիան ցեմենտի պես պետք է իրար միացնի գեկուցման մեջ յեղած մյուս բոլորը: Հաշվետու գեկուցման բոլոր մասերը պետք է կառուցված լինին գարնանացանի կամպանիան հաջող տանելու, նաև գյուղի չբավոր—միջակ մասը համախմբելու և կուլակներին հակադրելու խնդիրների վրա:

2. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱԶՄՎՈՒՄ ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԱՆՑՆԵՆ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խորհուրդների հաշվետու կամպանիան ու նրանց գործունեյութիւնն ինքնաստուգումը, ինչպես այդ Ադրբեյջանի Կենտրոնական Գործադիր Կոմիտեի Պրեզիդիումի հրահանգն է վորոշում, — յերկու գործնական մասեր ունի ա) հաշվետվութիւն կատարած գործի համար և բ) խորհրդի կուլտուրական ու տնտեսական գործունեյութիւնն և առանձնապես գարնանացանի կամպանիայի պլանը: Հաշվետու կամպանիայի անելիքն է՝ վճռականորեն մոբիլիզացիայի յենթարկել ամբողջ գյուղական աւտովը՝ գյուղխորհրդի գործունեյութիւնն ամենալայն կերպով քննադատելու և բազմակողմանի քննութիւնն տանելու, առաջիկա աշխատանքների պլանը մասսայորեն կազմելու համար:

Գյուղական խորհրդի հաշվետվութիւնն պատրաստելն ու նրա աշխատանքների պլանը կազմելը վոչ միայն գյուղական խորհրդի պրեզիդիումի, այլ և ամբողջ գյուղական



ակտիվի ու ամբողջ գյուղական հասարակայնութեան գործն է:

Իսկ ինչպէս ե տարվում այդ կամպանիան: Խորհրդի հաշվետու կամպանիայից առաջ խորհուրդն հենց իր սեփական գործունեութեան ինքնաստուգումն ե կատարում:

Ինքնաստուգման համար գյուղխորհուրդն իր միջից, սեկցիաների ակտիվ գործիչներից, բաւարակային կազմակերպութեան, փոխգործակալների, կոլխոզների, կուսակցական ու կոմսոմոլական բջիջների, գյուղատնտեսների և պատվիրակուհիների ներկայացուցիչներից մի հանձնաժողով ե կազմում՝ 7—9 հոգուց բաղկացած: Ինքնաստուգման հանձնաժողովը ստուգում ե խորհրդի գործունեութեանը՝ նրա ընտրութեան սկզբից մինչև ներկա օրերը և խորհրդի աշխատանքին վերաբերող բոլոր հարցերը (ցուցակը հարցերի, վորոնցով հետազոտութեանը պետք ե տարվի, տես 3-րդ գլուխ): Ինքնաստուգման հանձնաժողովներն ավելի լրիվ աշխատանք տանելու համար՝ պետք ե իրանց գործունեութեանը կապեն վերաստուգիչ հանձնաժողովների հետ:

Խորհրդի պլենումը 1) լսում և հաստատում ե անցած ժամանակաշրջանում խորհրդի ունեցած գործունեութեան մասին պրեզիդիումի տված հաշվետութեանը, 2) լսում ե կուլտուրական ու անտեսական գործունեութեան և զարնանացանի կամպանիայի պլանը, 3) ինքնաստուգման հանձնաժողով ե ընտրում:

Նույն այդ նիստին խորհուրդը հաշվետու կամպանիայի բազմակողմանի ու լրիվ մշակած պլանն ե նշում, տեղ ու զեկուցողներ ե աչքի առաջ ունենում հաշվետու ընդհանուր ժողովների համար և այլն (տես „Ինչպէս պետք ե կազմվեն հաշվետու ընդհանուր ժողովները“ գլուխը):

Ինքնաստուգման հանձնաժողովին մոտավորապես մի շաբաթ ժամանակ ե տրվում, աշխատանքը վերջացնելու համար: Հանձնաժողովն իր գործունեութեանը յերբեք չի սահմանափակում միայն խորհրդի աշխատանքն ստու-

գելով, այլ և ստուգում ե գործունեութեանն այն կազմակերպութեանների, վորոնց խորհուրդն ե դեկավարում: Որինակ՝ հանձնաժողովը պետք ե նայի, թե խորհուրդը գործնականորեն ինչպէս ե դեկավարում կոլխոզը, գյուղական զատարանը, ընկերութեանները և այլն և այլն: Այսպիսով՝ հաշվետու կամպանիան և ինքնաստուգումը գյուղում տարած մեր ամբողջ աշխատանքի ստուգումն ե:

Յերբ ինքնաստուգումն իր աշխատանքը կվերջացնի, իր արձանագրութեանը, կամ ուրիշ խոսքով՝ իր հաշվետութեանը կկազմի, այն ժամանակ խորհրդի հետ գուրս կգա գյուղերում, մարդաբնակ կետերում հաշվետու ժողովներում գյուղական խորհրդի հաշվետութեանը կից զեկուցում տալով: Գյուղական ակտիվիստների անելիքն ե՝ ահա այդ ժողովներն, ինչքան կարելի ե, աշխույժ դարձնել: Պետք ե չշտապել ժողովները վերջացնելու: Նրանք կարող են տևել մի օր, յերկու օր և ել ավելի: Պետք ե հնարավորութեան տալ, վոր անպատճառ արտահայտվեն բոլոր ցանկացողները:

Ինչպէս կանոն՝ խորհուրդների և ինքնաստուգման հանձնաժողովների գործիչները գյուղական ընդհանուր ժողովներում հաշվետութեանն անելուց առաջ՝ իրանց զեկուցումներն են տալիս չքավորութեան ժողովներում, այնտեղ պլանի համար լրացումներ և իրենց պլանն են մշակում, չքավորութեանն ու գյուղական ակտիվն են կազմակերպում, վոր բոլորը ներկայանան հաշվետվական ընդհանուր ժողովներին:

Գյուղական խորհուրդը պետք ե այնպէս անի, վոր հաշվետու ժողովներին, ինչքան կարելի ե, գյուղխորհուրդների բոլոր ակտիվ անդամները մասնակցեն վորպէս զեկուցողներ: Պետք ե վոր հաշվետու ընդհանուր ժողովներում ներկա լինին ու բացատրութեաններ տան իրանց կազմակերպութեանների և իրանց սեփական աշխատանքի մասին՝ գյուղատնտեսները, անասնաբույժները, հողաչափ-



ները, ուսուցիչները, բժիշկները, վարկային ընկերությունները, կոոպերատիվների գործիչները, կոլխոզնիկները և այլն:

### 3. ԻՆՁ ՀԱՐՑԵՐԻ ՎՐԱ ՊԵՏՔ Ե ԿԱՆԳ ԱՌՆԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ—ԻՐԵՆՑ ՅԵՎ ԻՆՔ-ՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՀԱՇՎԵ-ՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵԼԻՍ

Գյուղական տնտեսությունների վերաբերմամբ.— Պետք է անցյալ տարվա հետ համեմատած թվեր տան հաջահատկի, բամբակի և մյուս տեխնիքական բույսերի ցանքսի, անասունների, գյուղատնտեսական մեքենաների մասին, և այլն:

Պետք է տեղեկություններ տան, թե քանակական ինչ փոփոխություններ են յեղել գյուղատնտեսական արտադրությունում, բերքատվության բարձրացման, տեխնիքական բույսերի ցանքսի ավելացման, հողի բարելաված մշակման նկատմամբ և թե արդյոք տեղ ինչ չափով է գութան մտնում:

Ինչպես է գնում կոլխոզների քանակությունն ավելացնելու գործը. արդյոք, կոլխոզները խոշորացվում են՝ մանրերի ձուլման և նոր անդամներ մտնելու հաշվին:

Ինչ փոփոխություններ են յեղել անհատական տնտեսություններում. գյուղացիության վոր խմբերի—չքավորների, միջակների և կուլակների մոտ են ավելացել անասունները, մեքենաները և վորոնց մոտ են պակասել: Վոր խմբերն են անցնում տնտեսությունը կուլտուրական միջոցներով տանելու յեղանակին. մասնաճյուղ իրանց ցանքսերի տարածությունն ընդարձակող առանձին չքավոր ու միջակ և այն կուլակների ծխերը, վոր կրճատում են: Մասնաճյուղ, թե ինչի մեջ է կայացել գյուղական խորհրդի աշխատանքը գյուղական տնտեսությունը զարգացնելու և վերակառուցելու գործում՝ ցանքսերի, անասունների, մեքենաների քանակությունն ավելացնելու,

անասնապահության վորակը բարելավելու, հողը մշակելու, հողաշինարարություն կատարելու, ցանքսային կամպանիայի, կոլեկտիվացման վերաբերմամբ, և այլն:

Սոցիալ-կուլտուրական աշխատանքի վերաբերմամբ.— Ժողովրդական կրթության մասին պետք է տեղեկություններ տալ, թե անցյալ տարվա հետ համեմատած՝ ա) ինչքան յերեխաներ են սովորում դպրոցներում. նրանցից քանիսն են չքավորների, միջակների և այլն. բ) դպրոցական հասակի ինչքան յերեխաներ չեն սովորում. նրանցից քանիսն են չքավորների յերեխաներ և ինչ է պատճառը, վոր չեն սովորում. գ) ինչքան են սովորում անգրագիտությունը վերացնելու կետում և ինչպես են հաճախում. դ) բնակչության ինչքան դրագետներ կան. յե) կա արդյոք խրճիթ-ընթերցարան և ինչպես է աշխատում. զ) գյուղատնտեսը, բժիշկն, ուսուցիչը զեկուցում տալիս են իրանց աշխատանքին վերաբերող հարցերի մասին. ե) թերթեր ստացվում են և ինչ են արել դրա համար գյուղխորհուրդները. ը) ինչպես է աշխատում բժշկական կետը, յեթե կա:

Գումարը տալ, թե գյուղական խորհուրդն ինչ աջակցություն է ցույց տվել կուլտուր-սոցիալական աշխատանքին. գյուղխորհուրդն ինչպես է հոգացել դպրոցի, խրճիթ-ընթերցարանի, բժշկական կետի, դպրոցական յերեխաների մասին. ինչ է արել դասախոսություններ կազմակերպելու համար և այլն:

Ֆինանսական տուրքային աշխատանքի վերաբերմամբ.— Հավաքված են, արդյոք, անցյալ և ընթացիկ տարիների ինքնատուրքավորման բոլոր միջոցները. ինչպես և ինչ բանի վրա են ծախսված ինքնատուրքավորման փողերը. ինչպես է անցել միասնական գյուղատնտեսական տուրք հավաքելը. ինչքան են տուրքի յենթակա առարկաներ թաքցրել. կազմել թաքցնողների ցուցակն և կարգալ գյուղական ընդհանուր ժողովներում. նույնն անել չարամիտ չվճարողների վերաբեր-



մամբ: Գյուղատնտեսական տուրքի ընդհանուր չափը, ինչքան է հավաքված: Ինչպես են անցնում պետական ապահովագրման վճարումներն ու փոխառությունը տարածելու գործը, ինչպես է անցել հացամթերումը, ով է թաքցրել հացի ավելցուկը և ով է սպեկուլյացիա արել:

Կ ա զ մ ա կ ե ռ պ չ ա կ ա ն ~ մ ա ս ս ա յ ա կ ա ն ա շխատանքի վերաբերմամբ.— Սեկցիաների աշխատանքը, ինչքան և ինչպես են կազմակերպված սեկցիաները, ինչպես են նրանք աշխատում անցյալ տարվա համեմատությամբ, լավ և վատ աշխատանքների որինակներ բերել:

Խորհրդի պլենումի աշխատանքը: Ինչքան կանոնավոր, պարբերաբար են պլենումի ժողովներ հրավիրվելը, նիստերի քանակությունը, ինչպես են հաճախել խորհրդի անդամները և առանձնապես ով է վոչ-հարգելի պատճառներով բացակայել ժողովներից, ինչքան գյուղական ընդհանուր ժողովներ են յեղել և ինչպես է յեղել հաճախումը, ինչպիսի ամենագլխավոր վորոշումներ են կայացրվել, արդյոք, գյուղխորհուրդը բոլոր վորոշումներն է իրականացրել և այլն:

Ակտիվի աշխատանքը.— ինչքան ակտիվ է հաշվետված, նրա կազմը, բաղադրիչ, չքավոր, միջակ ու կանայք, ակտիվը վորպիսի ակտիվ ոգնություն է ցույց տվել խորհրդի աշխատանքին:

Արդյոք, սոցիալիստական մրցության պայմանագիր կնքված է, ում հետ, ինչ չափով է իրագործված, փոխադարձ հաշվետվություն յեղել է մրցող գյուղխորհրդի հետ:

Խորհուրդների կողմից չբավարարությունը ցույց տված ոգնությունը.— Ձբավորությունն անցյալ տարվա համեմատությամբ ինչ ոգնություն է ցույց տրված կոոպերացիան Ֆոնդի, վարկավորման վերաբերմամբ, արտոնություններ, հողաշինարարություն վերաբերմամբ, և այլն:

Սոցիալական ապահովություն.— ինչքան վորբեր, կարմիր-բանակայինների ընտանիքներ, քաղաքացիական կռվի ինվալիդներ են հաշվետված և նյութական ինչպիսի բանություն է ցույց տրված նրանց:

Իրավական պաշտպանություն.— ինչքան բատրակներ են հաշվետված, վարձելու պայմաններում բարելավում յեղել են արդյոք, ինչ քանակությամբ ստրկացնող պայմաններ են քանդված:

Պայքար բանդիտիզմի ու գողություն դեմ.— քանի ղեպքեր են յեղել սպանություն, կողոպուտի, անասուններ քշելու, գյուղխորհուրդը գողություն բանի ղեպք է բացել, գողությունները բաց անելու համար գյուղխորհուրդն ինչ միջոցներ է ձեռք առել և կազմակերպել է, արդյոք չբավարարված:

Աշխատանքի մյուս ճյուղերի վերաբերմամբ.— Ի մի գումարել և ղեկուցել թե ինչպես են տարվել հացամթերումը, փոխառության տարածումը, գյուղական խորհուրդների պրեզիդիումի ընտրությունները և գյուղական դատարանների ընտրությունները:

Առաջարկված ուրվագիծը միայն ցուցակն է այն հարցերի, վորոնց վրա պետք է կանգ առնել հաշվետվությունը կազմելիս, գյուղական խորհուրդի հաշվետվությունը կարող է բոլորովին ուրիշ կերպ կառուցվել և ղեկուցման պլանը կարող է բոլորովին ուրիշ կերպ լինել: Նա կարող է ավելի լայն ու լրիվ լինել, վորովհետև մենք մատնանշեցինք այն հարցերը, վորոնց վրա հարկավոր է կանգ առնել: Գյուղական խորհրդի հաշվետվությունը հիմնականում պետք է մոտավորապես հետևյալ պլանով կազմվի. ա) հիմնական խնդիրներ, վոր հաշվետու ժամանակաշրջանում դրված են յեղել գյուղական խորհրդի առաջ. բ) այդ խնդիրներից վորն է իրագործված և ինչպես, լավ թե վատ. գ) ինչը չի իրագործված և ինչու. դ) կուլտուրական, տնտեսական ու կազմակերպչական աշխատանքի կողմից ինչ հերթական խնդիր-



ներ կան դրված գյուղխորհրդի առաջ. յե) լրացնել գարնանացանի կամ պանիան տանելու պլանը և գ) ինչ ե պահանջվում, վոր այսուհետև ել գործը հաջող զնա:

#### 4. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊԿԵՆ ԽՈՐՀՈՒՐԴ-ՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎՆԵՐՆ ՈՒ ԻՆՔՆԱՍՏՈՒ-ԳՈՒՄԸ

Պրակտիկան ցույց ե տալիս, վոր հաշվետու ժողովների վերաբերմամբ անհարթություններ են լինում այնտեղ, վորտեղ չեն կարողանում այդ ժողովները կազմակերպել: Հաճախ ժամանակին չնախատեսնված վոր և ե փոքրիկ բան փչացնում ե գործը: Հաշվետու ժողովը հաջող գումարելու ու վարելու համար՝ գյուղխորհուրդը պետք ե վաղորդ լավ մտածի ժողով գումարելու ամբողջ ընթացքի մասին, նախատեսնի ծագելիք բոլոր դժվարությունները, վորպեսզի դրանց ժամանակին վերացնի:

Պետք ե այնպես անել, վոր բոլոր տղամարդիկ ու կանայք գլխովին ու առանց բացառությունների անհատական հաշվետու ժողովներին. այսինքն հաշվետու կամ պանիայով ընդգրկել բոլոր ընտրողներին: Դրա համար հաշվետու ժողովները կատարվում են բոլոր, նույն իսկ 10—15 ծուխից բաղկացած մանրիկ կետերում, իսկ մեծ գյուղերը բաժանվում են հաշվետու թաղերի (ինչպես ընտրական կամ պանիայի ժամանակ ե լինում), խնամքով տեղ պատրաստել (չենքը մաքրել, դրոշակներ կախել, իսկ յեթե հրապարակում ե՝ ապա մաքրել ձյունը, ցեխը, նստաբաններ զնել, ամբիոններ սարքել և այլն): Բնակչությանը ժամանակին ու բոլորին ծանուցել ժողովի ժամանակի ու տեղի մասին, զեկուցման համար հաջող ժամանակ ընտրել և հաշվետու ժողովներին լավ ղեկավարություն կազմակերպել:

Ժողովի ժամանակը նշանակելիս՝ պետք ե հաշվի առնել հանգամանքները՝ որինակ, գյուղացիների մասսայական

բացակայությունը գյուղից, կենցաղային առանձնահատկությունները (սառնամանիք, անձրի, և այլն):

Հաշվետու ժողովի տեղը շատ կարևոր դեր ե խաղում. մի գյուղում ժողովի են կանչել գյուղի կենտրոնում. և ընտրող տղամարդկանցից քչերն են յեկել, իսկ կանայք բոլորովին չեն յեղել: Իսկ յերբ ժողով են նշանակել նույն գյուղի յերեք կետերում, յեկել են գրեթե բոլոր տղամարդիկ և կանայք: Դրա պատճառը շատ պարզ ե. կանայք հեշտությամբ կարող են բացակայել, վորովհետև յերես յերեսներն են պահում, անասուններին են նայում: Խորհուրդների անելիքն ե՝ խորհրդների հաշվետվությունը մոտեցնել աշխատավորներին:

Վորպեսզի բոլորը ներկայանան հաշվետվությանը, պետք ե ժամանակին, մի քանի որ առաջ, նույնպես հենց հաշվետվության որը այդ մասին հայտարարել ամբողջ բնակչությանը: Մենք հանձնարարում ենք, վոր տեղական միջոցներով կազմակերպվի հաշվետու ժողովներին գալու ծանուցումները բաժանելու գործը՝ թե տղամարդկանց և թե կանանց: Հաշվետու ժողով գալու համար ծանուցում բաժանելով թե հետաքրքրություն կառաջանա ղեպի ժողովը և թե հենց ժողովը տաք կանցնի:

Հաշվետու ժողովի համար ժամանակին տեղ գտնելն ու սարքելը մեծ նշանակություն ունի: Մեր Ադրբեջանյան պայմաններում շենքի հարցը բացառիկ նշանակություն ե ստանում: Հաշվետու ժողովներ կարող են լինել զպրոցում, խրճիթ-ընթերցարանում, խորհրդի շենքում, կամ հենց ուղղակի հրապարակում կամ փողոցում: Բոլոր այդ դեպքերում պետք ե պատրաստել տեղը, վորտեղ ժողովը պետք ե լինի, նստարաններ զնել, ամբիոն, զեկուցողի համար տեղ սարքել, լողուններ, դրոշակներ, առաջնորդների պատկերներ կախել և այլն: Մի խոսքով ժողովի տեղը սարքելով և հոգածություն ցույց տալով՝ այդ տեղին հանգիստավոր-գործատեղի տեսք տալ:



Բնակչութիւնը հայտարարելու և ժողովի տեղը պատրաստելու գործում կոմսոմոլը կազմակերպում է գյուղական յերիտասարդութիւնը. նա կազմակերպչական հանգին աշխատանք պետք է կատարի:

Յազմակերպելով գյուղի յերիտասարդութիւնը, ազ- ջիկներին ու յերիտասարդներին՝ կոմսոմոլը վոչ միայն գյուղի ամբողջ յերիտասարդութիւնը ներկայանալը պիտի ապահովի, այլ և պիտի գրավի գյուղի մնացած մասը: Մենք կոմսոմոլին առաջարկում ենք յերիտասարդութիւնը բրիգադներ կազմակերպել բնակչութիւնը ծանուցում բաժանելու գործում, յեթե ծանուցումներ լինին, ժողովի տեղը սարքելու, ցուցահանդեսներ կազմակերպելու և այլն:

Աշխատանքի կազմակերպչական մեթոդները պետք է սովորել դասակարգային թշնամիներից: Մոլլաները, տեր- տերները իրանց տոներին մասին որ առաջ են հիշեցնում, մի քանի որ, նույն իսկ շաբաթներ առաջ են նախազգու- շացնում, միևնույն բանը շատ անգամ միտները գցում: Իրանով նրանք ներգործում են մարդու հոգեբանութիւնը վրա: Մենք դրան հակադրենք մասսաները հովաքելու աշխատանքի բազմակողմանիութիւնն ու խանդավառու- թիւնը, հաշվետվական կամպանիան կազմակերպելու վո- գեւորութիւնը: Կոմսոմոլը խորհուրդների անդամների ու ակտիվիստների միջոցով պետք է կարճ ժամանակի, մի քանի ժամի համար ժանկարական մտերներ կազմակերպի՝ յերեխաներին մի տուն հավաքելով ու խնամելով: Մեզ- նում մսուր պիտի կազմակերպել գրեթե բոլոր գյուղե- րում, ի նկատի ունենալով, վոր տաք տեղեր չունենա- ւով՝ ժողովները պետք է փողոցներում կայանան:

Մենք անհրաժեշտ ենք գտնում ինքնաստուգման ժամանակամիջոցում և հաշվետու կամպանիան տանելու մոմենտում գյուղի բոլոր ակտիվիստներին լիովին աշխա- տանք (նազրուկկա) տալ: Կանանց, կոմսոմոլի յերիտա- սարդութիւնն ու չքավորների մի շարք նախնական ժողով-

ներ գումարել. այդ ժողովներում պիտի քննել,—մինչև գյուղական ընդհանուր ժողովներում գնելը,—գյուղական խորհրդի գեկուցումը, նրա կողմից առաջարկվող աշխա- տանքի պլանը, ժասնավորապես առաջիկա գարնանացանի պլանը: Պետք է վոր հաշվետվական ընդհանուր ժողո- վում՝ միանգամայն կազմակերպված ձևով՝ ոլանի լրա- ցումներ անեն և իրանց վերաբերմունքը դեպի խորհրդ- ների աշխատանքը արտահայտեն գյուղի աշխատավորնե- րը, կանայք, չքավորութիւն ժողովը, բատրակութիւնը, և այլն:

Ինքնաստուգումն ու խորհրդների հաշվետու կամ- պանիան պետք է գյուղի ամբողջ աշխատավոր մասի վերջնական համախմբումն ու չքավորութիւն և բատր- ակութիւնը կատարյալ ակտիվութիւնը տա:

Մենք առաջարկում ենք անպայման պատի թերթ կազմակերպել, վորտեղ սուր կերպով մերկացնել գյուղի աշխատանքի բոլոր թերութիւնները. նույն թերթում քննել գարնանացանի կամպանիայի գործական միջոց- ները:

Մենք առաջարկում ենք գյուղխորհրդին, գյուղա- տնտեսներին, կոլխոզներին և այլն, իրանց աշակցութիւնը չքավոր — միջակային բրիգադներ կազմակերպելով՝ խոր- հուրդների հաշվետու կամպանիայի ժամանակ տեղեկա- տու սեղան սարքել գյուղխորհուրդներին կից՝ գյուղա- ցիներին ոգնելու գարնանացանի կամպանիայի հետ կապ- ված բոլոր հարցերում:

Մենք անհրաժեշտ ենք գտնում յուրաքանչյուր գյուղխորհրդի տերիտորիա ագիտ-սայլ ուղարկելու գործը կազմակերպել, վորպես գարնանացանի կամպանիան հա- ջող տանելու ագիտացիայի մի միջոց:



V.

ՀԱՐԿԱՎՈՐ ԵՆ ՄԵԶ, ԱՐԴՅՈՔ, ԱՅԴՊԻՍԻ  
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

(ԼԵՆՔՈՐԱՆԻ ՇՐՋԱՆ)

Լենքորանի շրջանում հանցավոր կերպով ազավադել են խորհրդային իշխանության դասակարգային քաղաքականութիւնը: Կուլակի վրա տուրք դնելու փոխարեն՝ տուրքը դրվել է չքավորի վրա, իսկ կուլակն ազատվել է: Իսկապես, ի՞նչ են ասում ահա այսպիսի փաստերը. 1) Աստարայի գայրայի ծանգերլու գյուղխորհրդի նախագահը թաքցրել է իր փեսայի՝ խոշոր կուլակ և վաշխառու Համիդ Մեհտի ողլու հարկի յենթակա առարկանները. դրա հետեանքով վերջինս ազատվել է տուրքից. 2) Միխ-Խաւրան գյուղում տուրքից ազատել են մի շարք կուլակներին. մանրամասն քննութիւնը ցույց է տվել, վոր դա արել է տուրքային կոմիսսիան՝ գյուղխորհրդի նախագահի հրամանով. 3) Խիլու գյուղական տուրքային կոմիսսիայի անդամ Ալի Զամանովը, վորը պարզապէս շահագրգռված էր կուլակների շահերը պաշտպանելով, համոզել է տուրքային կոմիսսիային տուրքից ազատելու կուլակներ Շյուքուր Շաքար ողլուն, Զաբի Սուլեյման ողլուն, Բալաբեկ Մամեդ ողլուն, Ասադբեկ Բաշիրբեկ ողլուն, Համիդբեկ Համիդբեկ ողլուն և Յադուլլաբեկ Դադալբեկ ողլուն: Հենց նույն Զամանովի պնդումով տուրքի են յենթարկվել գյուղի չքավոր Զանգիր Ղահրամանովը և ուրիշ սակավարող տնտեսութիւններ:

Այդպիսի դեպքեր շատ կան: Սակայն այսքանն էլ բավական է ասելու, վոր Լենքորանի ստորին ապարատն աղտոտված է, վոր տեղերում ծռում են Կուսակցության և խորհրդային իշխանության հրահանգները՝ գյուղատըն-

տեսական տուրքի մասին: Անխնա պետք է կռվել այդպիսի վտճարագործութիւնների դեմ, խիստ պատժել մեղավորներին: Պիտի բացատրել աշխատավոր գյուղացիներին, վոր խորհրդային կառավարութիւնը հաստատապէս պաշտպանում է աշխատավորների շահերը, իսկ կուլակներին և նրանց կողմնակիցներին, ովքեր ել վոր լինեն նրանք, չի խնայում: Գյուղատնտեսական տուրքը պիտի ժողովել լիովին. խորհրդային իշխանութիւնը թույլ չի տա կուլակներին ու հակախորհրդային տարրերին՝ խանգարելու այդ կարևորագույն կամպանիան:

Լենքորանի ստորին խորհրդային ապարատը փոխանակ ամեն կերպ աջակցելու հացամթերումներին, իրաւագործունեյությամբ խանգարել է այդ գործը: Կուլակները թաքցրել են հացի և բրնձի իրենց ավելցուկները, զարգացրել են սպեկուլյացիան: Միթե սա աշխատանքը խանգարել չէ, յերբ Նովո-Ալվադինի գյուղխորհրդի նախագահը իր հացի ավելցուկը փոխանակ պետութիւնը տալու՝ ծախել է կուլակին: Միթե սա բան է, յերբ Կարամիդլի գյուղի գյուղացիներին հացը կշռելիս խաբել են, կամ յերբ Շուքուրի գայրայի գյուղացիներից բրնձի ավելցուկները չեն ընդունել, այդպիսով ստիպել են նրանց՝ իրենց ավելցուկները տալու մասնավորին: Ապագայում վերջ պիտի տալ այդ խայտառակութիւններին: Դուրս խուկել գյուղխորհուրդների անգործունեյա գործիչներին. հացամթերման ապարատից վռնդել ամբողջ աղբն ու խլամը. կուլակների և ուրիշ հակախորհրդային տարրերի դեմ ձեռք առնել ամենախիստ միջոցներ՝ հենց վոր մի փոքր փորձ անեն հացամթերումները խանգարելու:

Վոչ ամեն անգ լավ են հասկանում կոոպերացման և կոլլեկտիվացման լուրջագործ: Ամենից վատ հասկանում են Լենքորանում: Վերցնենք կոլխոզային շինարարութիւնը: Կոլխոզների մեջ են մտել խորթ տարրեր, չկա աշխատանքի լրիվ համայնացում, կոլխոզների անդամները դեռևս ինքնուրույն տնտեսութիւն են են տանում, կոլխոզնե-



բում կան մի շարք անտեսանելիություններ և հանցագործություններ: Մասաչիսետսի գաղութի կալիֆոռնիա կոլտոգում նախագահը վառնել է 1,800 ուղբի, կոլտոգնիկներն իրենք չեն աշխատում, գերադասում են բատրակներ վարձել, գյուղատնտեսական մեքենաներն ընկած են առանց ոգտագործելու՝ բաց յերկնքի տակ: Նույնը նկատվում է Աստորախան-Բազարի գաղութի կոլտոգում: Աշխատավոր գյուղացիությունը տեսնելով կոլտոգային խայտառակությունները, հրաժարվում է մտնելու նոր կոլտոգները:

Այդ ամենը կատարվում է գյուղական խորհուրդների և գաղապետությունների աչքի առաջ: Նրանք իրենց անգործունեությունից, անուշադրությունից և ղեկավարության բացակայությունից վարկաբեկում են գյուղական տնտեսության կոլտոգի վաճառքը:

Համարյա նույնպիսի պատկեր է նաև գյուղատնտեսական վարկային ընկերություններում և սպառողական կոոպերացիայում: Իրոք, միթե դասակարգային գծի չափազանց աղավաղում չէ, միթե խորհրդային իշխանության վարկաբեկում չէ, յերբ Մասսաչիսետսի վարկային ընկերությունում 35,000 ուղբու ժամանակն անցկացրած փոխառություններ կան, վորից 90%՝ կուլակներին և հարուստ տնտեսություններին վրա է ու նրանք ամեն կերպ ձգձգում են իրենց պարտքի վճարումը, կամ թե չէ՝ Աստորախան-Բազարի վարկային ընկերության նախագահ Ալեքսանդրովը կուլակներին վոչինչ չի մերժում, իսկ չքավորներին ամեն ինչ տալիս է կանխիկ վճարով, են ել անպետք ապրանք:

Սպառողական կոոպերացիայում քառս է՝ բյուրոկրատիզմ, վոլոկիտա, անդամների մեջ վոչ մի մասնաշաղկապ աշխատանք չի տարվում, առևտրական ապարատն աղտոտված է հանցավոր տարրերով: Շատ կոոպերատիվներում առաջին անհրաժեշտության մթերքները (չաքար, ալյուր, մանուֆակտուրա, կերոսին) տրվում են մասնա-

վոր առևտրականներին, կուլակներին և մոլլաներին, կոոպերացիայի աշխատողներն զբաղվում են ինքնամատակարարումով:

Աստորախան-Բազարի, Սերջալու, Մասսալու, Պրիշիբինի, Շուբյուքի, Լենքորանի (քաղաքի), Աստորայի կոոպերատիվները որինակ կարող են ծառայել ամենահանցավոր և վայրի անփութություն ու խեղառություն և մեր կոոպերատիվ քաղաքականության աղավաղման: Այդպիսի կոոպերատիվները միայն խանգարում են մեր տնտեսական աշխատանքը գյուղում:

Ջրի հարցն Աղբեջանի գյուղում ամենագլխավորն է: Իսկ ի՞նչ է անում Լենքորանի ջրային կազմակերպությունը: Վոչինչ, բացի դասակարգային թշնամուն ծառայելուց: Աստորայի և Շուբյուքի ջրանների միջաբանների և ջուլաբանների կաշառակերությունը հայտնի է ամեն մեկին: Առանց փլավի, նվերի վոչ մի չքավորի ջուր չեն տա: Այնինչ և միջաբանները և ջուլաբանները յենթարկվում են դաղապետություններին և գյուղխորհուրդներին: Հարց է առաջ գալիս՝ ի՞նչ են անում նրանք այս չարիքի դեմ պայքարելու համար: Վոչինչ: Մատենների արանքով են նայում, թե ինչպես են խախտում աշխատավոր գյուղացիների շահերը: Դա արդեն անփութություն չէ, այլ ուղղակի հանցանք:

Այսպիսի խայտառակությունների թույլ տվող խորհուրդներ մեզ հարկավոր են: Վոչ, մեզ հարկավոր են խորհուրդներ, վորոնք գյուղում անց են կացնում հաստատուն դասակարգային գիծ, վորոնք գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման տնտեսական աշխատանքն են կազմակերպում, վորոնք անխնա կերպով դուրս են բշում ստորին ապարատից (ինի դա գյուղխորհուրդ, կոոպերատիվ կամ կոլտոգ) ամբողջ կուլակային և հանցավոր տարրը:



## ԻՆՉՊԵՍ ԵՆ ԳՈՐԾԵԼ ՍԱՄՈՒԽԻ ԽՈՐ- ՀՈՒՐԴՆԵՐԸ

Գյանջայի շրջանի Սամուխի ռայոնի հետազոտութիւնը ցույց ե տվել, վոր այդ ռայոնում գյուղխորհուրդները թույլ են գործում: Գյուղխորհուրդները վոչ մի կազմակերպչական մասսայական աշխատանք չեն կատարել: Շատ գյուղական հասարակական կազմակերպութիւններում հանցագործութիւններ են կատարվել, իսկ գյուղխորհուրդները չիմանալն են դրել:

Մորհուրդների աշխատանքի թուլութիւնից ոգավելով՝ կուլակները Սամուխի ռայոնում վճռական հարձակման են անցել. տեղ-տեղ մտել են խորհուրդների մեջ, կամ կարողացել են իրենց մարդկանց գյուղխորհրդի նախագահ ընտրել տալ (Ելզարայում):

Ահա ցայտուն օրինակներ, վոր բնորոշում են կուլակների հարձակումը Սամուխում:

Ահա Սանգարի գյուղխորհուրդը: Հողաբաժանման ժամանակ լավ հողերը տրվել են չքավորներին և բաւորակներին, իսկ կուլակներին բաժին են հասել վատ հողերը՝ Ալագանի են կողմը: Այդպիսի հողաբաժանումից զժգոհ կուլակները կարողացել են գյուղական ժողովին վորոշում կայացնել տալ, վորով չքավորների և բաւորակների լավ հողերը վերաբաժանվել են, տրվել գյուղի կուլակներին և հարուստներին: Սանգերի գյուղխորհուրդը հաստատել է գյուղական ժողովի այդ վորոշումը և կուլակներն ստացել են չքավորների լավ հողերը:

Դասակարգային գիծն ամեն կերպ ծովել է: Ինքնաքննադատութիւն չի յեղել: Սամուխի գյուղխորհուրդները մինչև այժմ ել չհն խուկում կուլակներն ժողովներից. կուլակները ներկա լինելով ժողովներին՝ մասնակցում են քվեարկութեանը և իրենց ոգտին վորոշումներ են հանել տալիս:

Ելզարայի գյուղխորհուրդը իր թղթատարի ռոճիկը հավաքում է այսպես. — կուլակից տարեկան 5 ռուբլի, միջակից — 3 ռ. 40 կոպեկ և ամեն չքավորից, ամեն մի բարակից — 1 ռ. 80 կոպեկ: Դուրս ե յեկել, վոր անհատական կարգով 1000 ռուբլուց ավելի տուրք վճարող կուլակ Մուսան, տվել է թղթատարի համար 5 ռուբլի, իսկ բաւորակ Մուստաֆան, վորն այդ կուլակի մոտ եր աշխատում, վոչինչ չուներ, բացի մի պատռոտված շապկից և բոյորովին տուրքից ազատված եր, վճարել է 1 ռուբ. 80 կոպ.:

Ելզարայի և Սամուխի ուրիշ գյուղխորհուրդների չքավորներն ու բաւորակները շատ անգամ ձայն են բարձրացրել փոխօգկոմիների ֆոնդերն ավելացնելու մասին, բայց խորհուրդները վոչինչ չեն արել: Որինակ, Ելզարայի փոխօգկոմը բացի պարտքերից վոչինչ չունի: Ելզարայի գյուղխորհուրդը փոխօգկոմին չի հատկացրել վոչ մի դեսյատին հող՝ հասարակական հերկի համար, չի տվել նրան վոչ մի անտեր կայք: Ելզարայի և Սամուխի մյուս փոխօգկոմները գոյութիւն ունեն միայն թղթի վրա:

Սամուխում գոյութիւն ուղղակի սովորական բան է դարձել: Որ չի պատահում, վոր գոյութիւն չլինի: Սանգարում վերջին ժամանակներս 50 գոյութիւն ե յեղել, Ելզարայում — ամառվա ընթացքում 20-ից ավելի և վոչ մի գող չի բռնված, չի բանտարկված, գողացվածը հետ չի առնված: Ումնից են գողացել: Չքավորներից, բաւորակներից, սակավակարողներից: Կուլակները թաքցնում եին գողերին: Սանգարի, Ելզարայի խորհուրդների նախագահներն ընկնելով կուլակների ազդեցութեան տակ զբաղվել են անպետք ակտեր կազմելով՝ գողերին բռնելու փոխարեն, վերջիններին հետամտելու փոխարեն: Տալի ու կես սրանից առաջ Սանգարում բաւորակ Իսմայիլ Մամեդ ողու գոմեշը կուլակներ Կոշկարը և Չաման-ողլին գողացել են, մորթել: Նրանք բռնվել են տեղի ու տեղը, հանցանքը խոստովանել և խոստացել իրենց 5 գո-



մեշներին մեկը տալ մորթածի փոխարեն: Տարի ու կես բատրակ Իսմայիլ Մամեդ-ողլին գանգաւում ե գյուղ-խորհրդի նախագահին, գնում-գալիս, լաց լինում և այդ ամենն—անհետևանք: Սանգարի գյուղխորհրդի նախագահը բավականացել ե միայն նրանով, վոր ակտ ե կազմել: Իսկ գողերն ազատ ման են գալիս. գոմեշը հետ չի տըր-ված:

Սամուխի գյուղխորհուրդները և հասարակական կազ-մակերպությունները վոչ մի միջոց ձեռք չեն առել չու-նեւորներին ու բատրակներին պաշտպանելու համար, հա-կահարված չեն տվել կուլակներին: Յեւ լրբացած կուլա-կը մինչև իսկ հաշվի չեր առնում պաշտոնական աշխա-տանքային պայմանագիրը: Փոյլի գյուղում անհատորեն հարկավորված կուլակ Մուսա Աղիգյոզալ ողլին՝ բաւկո-մում կնքած պայմանագրի հակառակ՝ չեր ուզում վճարել բատրակ Պեչենակուն հասնող փողը: Ինչ ե անում բատ-կոմը: Ինքը բաւկոմը համոզում ե բատրակին ստանալու ավելի պակաս գումար, քան թե պայմանագրում եր վո-րոշված: Նույն եղբարայում կուլակ Մեհտիխանը 6 ամիս չի վճարում 120 բուրլի բատրակ Ալի Միրզա-ողլուն, իսկ բաւկոմ Զամալը կուլակներ Աբդուլլա և Մուսա Աղիգյո-զալ ողլու մոտ սարքած քեֆում պար ե գալիս:

Կուլակների անասունները չքավորների ցանքսերն արածում են: Վերջիններիս գանգաւները մնում են ան-հետևանք: Գուղխորհրդին գանգաւ ե տալիս չքավոր Ռու-ստամ Նովրուզ ողլին, վորի բամբակի ամբողջ ցանքսը փչացրել եին ձայնագուրկ-կուլակ Սայադի անասունները (Փոյլի գյուղում): Այդ գանգատը մի ամիս ընկած ե մնում գյուղխորհրդում առանց հետևանքի:

Ահա այսպես են գործել Սամուխի շրջանի գյուղ-խորհուրդները: Բայց այդպես չպիտի գործի մեր վոչ մի գյուղխորհուրդը:

Այդ բոլոր թերությունները չեին լինի, յեթե Սա-մուխի ռայոնի գյուղխորհուրդները ձեակերպեին և կազ-

մակերպեին գյուղական ակտիվ բատրակներին և չքավո-րներից. յեթե գյուղխորհուրդներն իրենց և գյուղական հասարակական կազմակերպությունների աշխատանքի ըս-տուգմանը և քննադատությանը քաշեին չքավորական ակ-տիվին. յեթե նպաստեին ինքնաքննադատության ծավալ-մանը. յեթե սխտեմատիկորեն ստուգեին փոխոգկոմների, բաւկոմների և գյուղի մյուս խորհրդային կազմակերպու-թյունների սոցիալական կազմը. յեթե իրենք խորհուրդ-ները վերջ տային գողությանը. յեթե խորհուրդները կազ-մակերպեին բատրակներին ու չքավորներին և գյուղի չքավոր մասի, ամբողջ գյուղական հասարակության ուշա-գրությունը սրեին գյուղի սոցիալիստական վերակառուց-ման հարցերի ու կուլակների և հակախորհրդային տար-րերի դեմ մղվող համարձակ ու վճռական պայքարի վրա:

## ՍԱՅԼԱՆԻ ԳՈՐԾԿՈՄԻ ԿԱԶՄԲԱԺՆԻ ՊՐԱԿ-ՏԻՍԱՅԻՑ

(ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ)

Մեծացնել բամբակի ցանքսերի տարածությունը, լիո-վին կատարել հացամթերումների պլանը, հավաքել միաս-նական գյուղատնտեսական տուրքը, ի մի գումարել գյու-ղատնտեսական միջոցները, կատարել վոռոգման աշխա-տանքները, ինդուստրացման 3 փոխառությունը տարա-ծել—այս տնտեսական խնդիրներն եին դրված Մուղանի առաջ. դրանց իրագործումը պահանջում եր, վոր ման-րամասն պլան մշակվի, շրջանից հաղորդվի գայրաներին, խորհուրդներին և առանձին ծխերին:

Այդ աշխատանքների անմիջական գործնական ծան-րությունը ռայոնի և գյուղի խորհրդային ապարատի վրա ե ընկում. խորհուրդները պետք ե ապահովեին «յերիտասարդ սոցիալիստական յերկրագործության մեծ ապագան» («Մեծ բեկման տարին» — Ստալինի): Այդ հսկայական աշխատանքը հնարավոր ե անել, յեթե



Մուղանի խորհուրդները գործնականորեն լծվեն նրան, յեթե այդ աշխատանքների շուրջը խորհուրդները կարողանան կենտրոնացնել գյուղի լայն չքավորումի շահային մասսաների ուշադրութիւնը, յեթե, վերջապես, խորհուրդներն ապահովվեն մշտական կանոնավոր ղեկավարութեամբ:

Կարողանալ ժամանակին խորհուրդների առաջ հարցը դնել, նրանց ուշադրութիւնը կենտրոնացնել այս կամ այն հարցի վրա, կենտրոնացնել գյուղական հասարակայնութեան ուշադրութիւնը և աշխատել ամենալավ գործնական արդյունքներն ստանալ, — ահա խորհուրդների կազմակերպչական-մասնաշաղկան աշխատանքի հիմնական անելիքը:

Սալյանի նախկին Գավգործկոմը և նրա կազմբաժինը չեն հասկացել, չեն կարողացել դնել մասնաշաղկան աշխատանքը: Գավգործկոմի կազմբաժինը մասնաշաղկան աշխատանքը մի վերացական բան է համարել, գոյութիւն ունեցող բաներից միանգամայն բաժան:

Ինդուստրացման 3-րդ փոխառութեան տարածումն է: Գավգործկոմը հրավիրում է դայրագործիչների, խոշոր գյուղխորհուրդների խորհրդակցութիւն: Խորհրդակցութիւնը ղեկավարում է Գավգործկոմի կազմբաժնի վարիչը, և այդ խորհրդակցութիւնը վորոշում է. — առաջարկել խորհուրդներին բացատրական կամպանիա տանելու, դայրայի և խորհուրդների բոլոր աշխատողներին զրկել փոխառութեանը և ելի մի քանի դատարկ «ցուցմունքներ», բայց վոչ մի իրական, վոչ մի գործնական բան: Պիտի հարցնել կազմբաժնի վարիչին՝ ո՞ւր մնաց մրցութիւնը ո՞ւր մնացին ռայոնական պլանները, ո՞ւր մնացին, վերջապես, հենց իրենք — խորհուրդները: Արդյունքն են և լինում, վոր փոխառութեան տարածումն անթույլատրելի կերպով դանդաղ է գնում, կատարվում են մի շարք խայտառակութիւններ, չարագործութիւններ, յուրացումներ, տարրական ցուցմունքների խախտում: Նույնն էլ

ինդուստրացման 2-րդ փոխառութեան վերաբերմամբ՝ որ լիդացիաները տերերի ձեռքը չեն տրվում, այդ գործերի վերաբերմամբ կատարյալ քառս է տիրում դայրա ֆինբաժնուն:

Հացամթերումներն են: Սալյանի նախկին գործկոմը նախապատրաստութիւն չի տեսել. նա բավականացել է միայն 5-յակ կազմելով և ռայոններին ստուգել թվեր տարով. պլան չի կազմվել գյուղի ծխի վերաբերմամբ: Հետեանքը. — պահեստներ չկան, հացահատիկը հանձնելու կետերը սխալ են ռայոնացված, կոլխոզները բերքը բաժանում են անդամների մեջ, խորհուրդները վկայաթղթեր են տալիս՝ հացահատիկը դուրս տանելու համար, կուլակներին չքավորութեան վկայաթղթեր են տրվում, վոչ մի որինակ չի յեղել, վոր հացահատիկը կոլեկտիվ կերպով հանձնեն: Դա է յեղել «կազմակերպված հարձակումը, կուլակներին և գյուղի հարուստներին — կապիտալիստներին դուրս մղելը, միջակներին և չքավորներին նոր ձեռքիցնելը» (Ստալին) ... Հուլիս ամիսը ծրագրված 163.000 փութ հացահատիկի տեղ ավել է 72.000 փութ, կամ 44% ր:

Վերցնենք ինքնատուրքավորումը: Սալյանի նախկին Գավգործկոմը և նրա կազմբաժինը չի հասկացել ինքնատուրքավորման ելութիւնը: Չի հասկացել, վոր բնականութեան ինքնատուրքավորումը չի կարող ծախսվել վարչական գծով: Չի հասկացել, վոր ինքնատուրքավորումով բացառապէս պիտի բավարարվեն կուլտուրական-սոցալական կարիքները. և ստացված միջոցները պիտի ծախսվեն վորս շնախահաշիվներով՝ գյուղական ժողովների վորոշման համաձայն: Հետեանքն այն է յեղել, վոր բոլոր գյուղերում ինքնատուրքավորումը պարտադիր կերպով կազմել է գյուղատնտեսական տուրքի 50%-ը: Սկսում են ակումբ կառուցել (Խիլի), չունենալով հաստատուն նախահաշիվ, չունենալով հաստատուն պլան, դրա համար անհրաժեշտ գումարները չվորոշած. և չենքն ավարտելու



համար տալիս են ամբողջ ռայոնում հավաքած գումար-  
ները: Գյուղխորհուրդների նախագահները ինքնատուր-  
քավորումից դուրսացած գումարները իրենց գրպաններում  
են պահում, կամ լավագույն դեպքում խնայողական  
դրամարկդին են պահ տալիս (Ղարադոնլի) և այդ գու-  
մարները մնում են այնտեղ անգործ, աննպատակ ընկած:  
Գյուղխորհուրդը (Արբատան) պարտադիր կարգով պա-  
հանջում է, վոր կոլխոզը միլիցիոներին պահելու միջոց-  
ներ տա և այլն և այլն: Յեվ այդ ժամանակ Ագրիկենտ-  
գործկոմի ղեկավար ցուցմունքներն ընկած են ռայոն-  
ներում: Դրանց չեն կարգում, գործիչները դրանց ծա-  
նոթ չեն: Դա լավ դեպքում: Իսկ վատ դեպքում՝ պատի  
թերթերը, պլակատները, անդրազիտության վերացման  
ցուցմունքներն ընկած են կասկածում, իսկ գործկոմի  
կուրյերի գրքում ընկած է անդորրագիրը հետևյալ մա-  
կագրությունով՝ «հաշվապահությանը՝ վճարել և ստանալ,  
27-ին ոգոստոսի»...

Սալյանի գավգործկոմի կազմբաժնից պիտի պատաս-  
խան պահանջել այս խայտառակ դրության համար:



ՀՀ Ազգային գրադարան



NL0218442



39.752

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР